Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 116,715,550.3 հազար դրամ՝ ծրագրված՝ 113,198,866.2 հազար դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 103.1%: Ընդ որում՝ 2023 թվականի նկատմամբ 2024 թվականի փաստացի եկամուտները հավաքագրվել են 1,885,249.1 հազար դրամով ավել:


Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի վարչական մասով ծրագրված 112,827,473.6 հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 116,348,987.2 հազար դրամ (կատարողական՝ 103.1%), ինչը 2023 թվականի փաստացի ցուցանիշից (113,494,340.0 հազար դրամ) 2,854,647.2 հազար դրամով ավել է, իսկ ֆոնդային մասով ծրագրված 15,863,575.1 հազար դրամի դիմաց ընդամենը եկամուտները փաստացի կազմել են 15,279,563.0 հազար դրամ, մինչդեռ 2023 թվականի փաստացի ցուցանիշը կազմել է 4,453,693.6 հազար դրամ, ընդ որում 2023 թվականի նկատմամբ 2024 թվականի փաստացին 10,825,869.4 հազար դրամով ավել է: Ֆոնդային մասով ընդամենը փաստացի եկամուտներից 14,913,000.0 հազար դրամը (նախատեսված՝ 15,492,182.5 հազար դրամ) վարչական մասի պահուստային ֆոնդից բյուջեի ֆոնդային մաս հատկացումն է, իսկ 2023 թվականին հատկացումը այս մասով փաստացի կազմել է 3,117,732.4 հազար դրամ:

Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեով սեփական եկամուտները ծրագրվել են 62,932,314.9 հազար դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 71,199,638.9 հազար դրամ կամ 113.1%: Ընդ որում, սեփական եկամուտների տարեսկզբին հաստատված բյուջեի ցուցանիշը՝ 61,514,335.1 հազար դրամ, 2024 թվականի ճշտումների արդյունքում չի նվազեցվել: Սեփական եկամուտների փաստացի հավաքագրումն ավել է 2023 թվականի փաստացի ցուցանիշից 21,108,607.6 հազար դրամով:

¹ Սույն հաշվետվությունում որպես ծրագրային կամ նախատեսված ցուցանիշներ ներկայացվել են 2024 թվականի **ճշտված բյուջեի** ցուցանիշները



Գծապարկեր 1. 2023 և 2024 թվականների փաստացի եկամտային ցուցանիշների համեմատական



113,699,633.8 հազար դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսված բյուջեի 94.5%-ը, ինչը 2023 թվականի 111,165,737.1 հազար դրամ փաստացի ծախսերից 2,533,896.7 հազար դրամով ավելի է: Նախատեսված և փաստացի ծախսված գումարների շեղումները հիմնականում պայմանավորված են գնումների գործընթացում առաջացած խնայողություններով և պայմանագրային պարտավորությունների անցումներով:

Ստորև ներկայացվում է Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծությունը:

Եկամուտներ

Երևանի 2024 թվականի բյուջեի փաստացի եկամուտների 40.1%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և տուրքերի հաշվին, որից 11.8%-ը՝ գույքային հարկեր անշարժ

գույքից, 10.9%-ը՝ գույքային հարկեր այլ գույքից, 16.7%-ը՝ տեղական տուրքերից, 0.7%-ը՝ համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերից: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի եկամուտների 12.5%-ը ձևավորվել է պաշտոնական դրամաշնորհներից, 47.4%-ը՝ այլ եկամուտների հաշվին, որից 0.2%-ը՝ շահաբաժիններից, 1.6%-ը՝ գույքի վարձակալության դիմաց եկամուտներից, 26.5%-ը՝ համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից և 15.7%-ը՝ վարչական գանձումներից, 1.4%-ը՝ տույժերից, տուգանքներից, 1.9%-ը՝ այլ եկամուտներից և ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներից:

Գծապատկեր 3. Երևան քաղաքի 2024թ. բյուջեի ընդամենը փաստացի եկամուտների կառուցվածքը և տեսակարար կշիռը:

Հարկեր և տուրքեր.

Հարկային եկամուտների և տուրքերի մասով 2024 թվականի փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 46,843,683.4 հազար դրամ՝ ծրագրված 38,898,843.6 հազար դրամի նկատմամբ, միաժամանակ նաև գերազանցելով 2023 թվականի փաստացի ցուցանիշը 68.5%-ով: Ծրագրված և փաստացի ցուցանիշների շեղումը հիմնականում պայմանավորված է գույքային հարկեր անշարժ գույքից եկամտատեսակի ավելացմամբ՝ պայմանավորված անշարժ գույքերի քանակական աճով, ճշգրտումներով, նպատակային նշանակության փոփոխություններով և վարչարարությամբ, ինչպես նաև շինարարության թույլտվության տուրքերի ավելացմամբ, ինչը պայմանավորված է 2025 թվականից Երևան քաղաքում եկամտային հարկի վերադարձի դադարեցման հետևանքով շինարարության ծավալների ավելացմամբ:

Հարկային եկամուտների հավաքագրումը 2024 թվականին կազմում է 26,567,230.7 հազար դրամ՝ գերազանցելով 2023 թվականի փաստացի ցուցանիշը 4,302,308.6 հազար դրամով: Մասնավորապես, գույքային հարկեր անշարժ գույքից հավաքագրվել է 13,800,592.6 հազար դրամ՝ ծրագրվածի 102.6%-ը, որը կազմում է հարկային եկամուտների 51.9%-ը, իսկ 2023 թվականի փաստացի ցուցանիշից ավել է 3,896,149.9 հազար դրամով: Փոխադրամիջոցների համար գույքահարկը, որը իր հերթին կազմում է հարկային եկամուտների 48.1%-ը, 2023 թվականի փաստացի ցուցանիշից հավաքագրվել է 406,158.7

հազար դրամով ավել և կազմել է 12,766,638.1 հազար դրամ՝ ծրագրվածից 529,068.3 հազար դրամով պակաս, ինչը պայմանավորված է ապառքների ոչ բավարար չափի բռնագանձմամբ:

Տեղական տուրքերի մասով եկամտի հավաքագրումը գերակատարվել է՝ փաստացի կազմելով 19,515,448.7 հազար դրամ՝ ծրագրված 11,569,619.0 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 168.7%, իսկ 2023 թվականի համեմատ այն հավաքագրվել է 14,761,532.4 հազար դրամով ավել:

Տեղական տուրքերի կազմում 82.6% տեսակարար կշիռ է ապահովել նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար փաստացի հավաքագրված 16,123,415.2 հազար դրամ տուրքը, որը գերակատարվել է 8,169,535.9 հազար դրամով: 2023 թվականի փաստացի ցուցանիշը պակաս է 2024 թվականի համապատասխան ցուցանիշից 15,809,838.8 հազար դրամով:

Արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մուտքերը կազմել են 1,159,170.1 հազար դրամ՝ ծրագրված 1,752,800.0 հազար դրամի դիմաց, իսկ 2023 թվականի համեմատ 2024 թվականի փաստացի ցուցանիշը պակաս է 1,282,397.8 հազար դրամով: Ծրագրված և փաստացի ցուցանիշների շեղումը պայմանավորված է նոր չափորոշիչների ընդունման հետևանքով գովազդների ապամոնտաժմամբ:

Ոգելից խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի համար տուրքերի մասով մուտքերը գերակատարվել են 110.2%-ով և կազմել են 645,421.7 հազար դրամ՝ ծրագրված 585,450.0 հազար դրամի դիմաց, որը 2023 թվականի փաստացի մուտքերից ավել է 2.3 %-ով:

Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տուրքերը կատարվել են 229.2%-ով, բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար՝ 138.5%-ով, համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար՝ 123.5%-ով:

Այսպիսով՝

-Անշարժ գույքի հարկի և գույքահարկի գծով փաստացի կատարողական ցուցանիշները կազմել են 26,567,230.7 հազար դրամ, ծրագրված 26,745,016.0 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 99.3%,

-Տեղական տուրքերի գծով փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 19,515,448.7 հազար դրամ՝ ծրագրված 11,569,619.0 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 168.7%,

-Պետական տուրքերի գծով փաստացի հավաքագրվել է 761,004.0 հազար դրամ, ինչը 2023 թվականի փաստացի ցուցանիշից 17,010.5 հազար դրամով պակաս է, իսկ ծրագրված 584,208.6 հազար դրամի դիմաց կատարողականը կազմել է 130.3%, որից.

- քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից՝ 144,242.7 հազար դրամ 100,000.0-ի դիմաց,
- նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայությունների հետ կապված համապատասխան գործարքներից՝ 616,761.2 հազար դրամ՝ 484,208.6-ի դիմաց:

Պաշտոնական դրամաշնորհներ.

Պաշտոնական դրամաշնորհների մասով մուտքերը կազմել են 14,571,690.9 հազար դրամ, ծրագրված 15,286,986.8 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 95.4%-ով, իսկ շեղումը պայմանավորված է դեռևս 2023 թվականին ՀՀ պետական բյուջեից ստացված ընթացիկ սուբվենցիաների չօգտագործված միջոցները 2024 թվականին ՀՀ պետական բյուջե վերադարձմամբ, ինչպես նաև ՀՀ 2024 թվականի պետական բյուջեից որպես կապիտալ սուբվենցիա «Երևանի էներգաարդյունավետության» 1-ին ծրագրի ԱԱՀ-ի մասով համաֆինանսավորմամբ, որը կախված է ծրագրի փաստացի կատարված աշխատանքներից: Համեմատության համար՝ 2023 թվականին այս ցուցանիշը կազմել է 22,314,021.6 հազար դրամ, ինչը 7,742,330.7 հազար դրամով կամ 34.7%-ով ավելի է 2024 թվականի մուտքերից:

Պաշտոնական դրամաշնորհների կազմում ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գծով փաստացի մուտքերը կազմել են 8,436,821.9 հազար դրամ՝ 2023 թվականի 13,430,355.1 հազար դրամի դիմաց, այլ դոտացիաները՝ 4,880,130.7 հազար դրամ, համեմատության համար՝ 2023 թվականին պետության կողմից այլ դոտացիաներ չեն ստացվել, համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով՝ 778,409.1 հազար դրամ՝ 2023 թվականի 410,165.6 հազար դրամի դիմաց, համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով 210,928.0 հազար դրամ՝ 2023 թվականի 654,691.7 հազար դրամի դիմաց, իսկ ՀՀ պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով տրամադրվող նպատակային հատկացումներից (սուբվենցիաներից) մուտքերը՝ 142,943.6 հազար դրամ՝ 2023 թվականի 7,463,097.8 հազար դրամի դիմաց և կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները՝ 122,457.7 հազար դրամ՝ 2023 թվականի 355,711.5 հազար դրամի դիմաց:

Այլ եկամուտներ.

Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեով այլ եկամուտների գծով ծրագրված էր 59,013,035.8 հազար դրամի մուտքեր, որի դիմաց փաստացի հավաքագրվել է 55,300,176.0 հազար դրամ, ինչը 2023 թվականի փաստացի ցուցանիշից պակաս է 9,419,250.6 հազար դրամով: Ծրագրված և փաստացի ցուցանիշների շեղումները հիմնականում պայմանավորված է այլ տեղական վճարների նվազմամբ, քանի որ 2025

թվականից Երևան քաղաքում եկամտային հարկի վերադարձի դադարեցման հետևանքով նոր բազմաբնակարան շենքերի շինարարական աշխատանքների համար տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքների քանակը նվազել է, ինչպես նաև Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների շրջանակներում իրականացվող ծրագրերի մասամբ չկատարմամբ, որոնց մասով պայմանագրային պարտավորությունները անցում են կատարել 2025 թվական:

Այլ եկամուտների մասով, մասնավորապես՝

-շահաբաժինների գծով փաստացի մուտքերը՝ ծրագրված 135,405.9 հազար դրամի դիմաց, կատարվել են 173.4%-ով՝ կազմելով 234,776.4 հազար դրամ, ինչը պակաս է 2023 թվականի փաստացի ցուցանիշից 121,932.5 հազար դրամով:

-գույքի (այդ թվում հողերի) վարձակալությունից եկամուտների գծով փաստացի մուտքերը կազմել են 1,876,460.5 հազար դրամ, ծրագրված 2,192,433.1 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 85.6%, իսկ 2023 թվականի փաստացի ցուցանիշի նկատմամբ հավաքագրվել է 380,540.9 հազար դրամով ավել,

-Կրթության, մետրոպոլիտենի կառավարման և դրա ենթակառուցվածքների զարգացման, քաղաքային լուսավորության, քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների գործունեության կազմակերպման, պետական կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման, ինչպես նաև քաղաքային ենթակառուցվածքների զարգացման (այդ թվում՝ ճանապարհաշինություն, մանկապարտեզների վերակառուցում, բուսաբանական այգու, անտառապուրակի կառուցապատում) ոլորտներում Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար ՀՀ պետական բյուջեից ստացվող միջոցների գծով փաստացի եկամուտները կազմել են 30,944,220.5 հազար դրամ՝ ծրագրված 34,979,564.5 հազար դրամի դիմաց կամ կատարվել է 88.5%-ով, որը 2023 թվականի համեմատությամբ կատարվել է 11,481,027.8 հազար դրամով պակաս:

-օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ եկամտատեսակով ծրագրված գումար չի եղել, սակայն փաստացի կատարողականը կազմել է 36,091.5 հազար դրամ՝ 2023 թվականի փաստացի ցուցանիշից 16.4%-ով ավելի:

-տեղական վճարների գծով փաստացի եկամուտները 2023 թվականի համեմատությամբ ավել են 1,269,650.9 հազար դրամով և կազմել են 17,920,362.6 հազար դրամ՝ ծրագրված 18,190,182.5 հազար դրամի նկատմամբ կամ ծրագրվածի 98.5%-ը:

-ինքնակամ կառույցների օրինականացման վճարների մասով փաստացի մուտքերը կազմել են 441,441.8 հազար դրամ, որը ծրագրվածից պակաս է 158,558.2 հազար դրամով, իսկ 2023 թվականի փաստացի ցուցանիշից՝ 134,923.3 հազար դրամով:

-վարչական իրավախախտումներից փաստացի մուտքերը կազմել են 1,518,514.8 հազար դրամ, ծրագրված 569,900.0 հազար դրամի դիմաց կամ ծրագրվածի 266.5%-ը, որն իր հերթին 127,263.0 հազար դրամով ավել է նաև 2023 թվականի փաստացի մուտքերից:

-համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից մուտքերը ծրագրված 13,000.0 հազար դրամի դիմաց կազմել են 101,783.1 հազար դրամ՝ միաժամանակ 2023 թվականի փաստացի ցուցանիշից 32.3%-ով ավել:

-Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհները՝ տրամադրված արտաքին և ներքին աղբյուրներից 2023 թվականի փաստացի ցուցանիշներից ավել են 8,730.2 հազար դրամով և կազմել են 16,600.0 հազար դրամ,


-համայնքի գույքին պատճառված վնասների փոխհատուցումից մուտքերը կազմել են 33,177.4 հազար դրամ 15,000.0 հազար դրամի դիմաց, կամ 221.2%, այդ մասով մուտքերը 2023 թվականին կազմել են 71,558.0 հազար դրամ:

-օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների գծով մուտքերը կազմել են 2,176,747.5 հազար դրամ՝ ծրագրված 2,312,999.8 հազար դրամի դիմաց, ինչը 2023 թվականի փաստացի ցուցանիշից ավել է 794,891.7 հազար դրամով:

Ծախսեր

Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի միջոցների հաշվին կատարվել է 113,699,633.8 հազար դրամի ծախսեր՝ նախատեսված 120,290,867.3 հազար դրամի դիմաց կամ 94.5%-ը: Ընդամենը փաստացի ծախսերից 106,875,943.6 հազար դրամն ուղղվել են ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), որտեղ 14,913,000.0 հազար դրամը հատկացվել բյուջեի պահուստային ֆոնդի վարչական մասից ֆոնդային մաս՝ 21,736,690.3 հազար դրամ կապիտալ բնույթի փաստացի զուտ ծախսերի իրականացման համար: Ընդ որում, ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը կազմել են 4,203,879.8 հազար դրամ, ինչը պակաս է 2023 թվականի մուտքերից 3,635,276.6 հազար դրամով: 2024 թվականի ընդամենը փաստացի ծախսերից ընթացիկ և կապիտալ բնույթի փաստացի զուտ ծախսերը 2023 թվականի փաստացի ցուցանիշներից ավել են եղել համապատասխանաբար՝ 6,746,895.6 հազար և 7,582,268.8 հազար դրամներով:

Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի ծախսերի ծավալներում գերակշիռ են սոցիալական բնագավառի (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն) ծախսերը, որոնց տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ կազմում է 37.3%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերինը՝ 23.8%, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերինը՝ 12.6%:




Գծապատկեր 4. 2023 և 2024 թվականների փաստացի իրականացված ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի

Աղյուսակ 1.

2024 թվականի բյուջեով նախատեսված և փաստացի իրականացված ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի

h/h	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի անվանումը	2024թ. բյուջեով նախատեսված հազար դրամ	2024թ. փաստացի ծախս հազար դրամ	Կատարման % նախատեսվածի նկատմամբ	2023թ. փաստացի ծախս հազար դրամ	2024 և 2023 թթ. փաստացի տարբերություն հազար դրամ
1	Աշխատանքի վարձատրություն	13,606,202.4	13,484,213.8	99.1%	11,664,437.5	1,819,776.3
2	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	13,190,473.1	12,145,777.4	92.1%	11,726,706.3	419,071.1
3	Տոկոսավճարներ	75,332.4	40,845.4	54.2%	32,420.3	8,425.1
4	Սուբսիդիաներ	50,509,146.7	50,463,495.8	99.9%	46,083,315.8	4,380,180.0
5	Դրամաշնորհներ	2,009,078.8	1,976,317.9	98.4%	909,603.3	1,066,714.6
6	Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	3,475,823.1	3,444,161.3	99.1%	1,328,493.7	2,115,667.6
7	Այլ ծախսեր	14,638,649.8	10,408,132.1	71.1 %	25,266,338.5	-14,858,206.4
8	Հիմնական միջոցներ	30,268,036.9	25,940,570.1	85.7%	21,993,578.0	3,946,992.1
9	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	-1,462,000.0	-233,643.8	16.0%	-250,715.3	17,071.5
10	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	-6,019,875.9	-3,970,236.0	66.0%	-7,588,441.1	3,618,205.1
Ընդամենը		120,290,867.3	113,699,633.8	94.5%	111,165,737.1	2,533,896.7



Պատկեր 5. 2024 թվականի փաստացի իրականացված ծախսերը՝ ըստ գործառական դասակարգման բաժինների

Աղյուսակ 2.

2024 թվականի բյուջեով նախատեսված և փաստացի իրականացված ծախսերը՝ ըստ գործառական դասակարգման բաժինների

h/h	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժնի անվանումը	2024թ. բյուջեով նախատեսված հազար դրամ	Փաստացի կատարված հազար դրամ	Կատարման % նախատեսվածի նկատմամբ	2023թ. փաստացի ծախս հազար դրամ	2024 և 2023 թթ. փաստացի տարբերություն հազար դրամ
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	13,515,743.1	12,765,983.4	94.5%	12,000,915.1	765,068.3
2	Պաշտպանություն	178,964.3	118,490.6	66.2%	80,276.7	38,213.9
3	Տնտեսական հարաբերություններ	27,026,697.3	26,915,414.4	99.6%	28,045,033.7	-1,129,619.3
4	Շրջակա միջավայրի պաշտպանություն	14,629,367.1	14,271,790.3	97.6%	13,577,319.5	694,470.8
5	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	9,016,366.2	7,686,966.4	85.3%	8,992,826.6	-1,305,860.2
6	Առողջապահություն	537,414.1	379,848.0	70.7%	1,045,549.7	-665,701.7
7	Հանգիստ, մշակույթ և կրոն	11,283,495.5	9,480,238.1	84.0%	7,341,600.4	2,138,637.7
8	Կրթություն	42,101,163.3	40,152,688.4	95.4%	36,478,630.2	3,674,058.2
9	Սոցիալական պաշպանություն	1,923,656.4	1,850,214.5	96.2%	1,729,044.6	121,169.9
10	Պահուստային ֆոնդեր	78,000.0	78,000.0	100.0%	1,874,540.7	-1,796,540.7
	Ընդամենը	120,290,867.3	113,699,633.8	94.5%	111,165,737.1	2,533,896.7

Աղյուսակ 3.

2024 թվականի ծախսերի կատարողականը՝ ըստ վարչական շրջանների և Երևանի քաղաքապետարանի (առանց վարչական շրջանների)

h/h	Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջաններ	2024թ. բյուջեով նախատեսված հազար դրամ	2024թ. փաստացի ծախս հազար դրամ	Կատարման %-ը նախատեսվածի նկատմամբ	2023թ. փաստացի ծախս հազար դրամ	2024 և 2023 թթ. փաստացի ծախսերի տարբերություն հազար դրամ
1	Երևանի քաղաքապետարան (առանց վարչական շրջանների)	86,952,543.7	81,927,584.8	94.2%	80,229,301.5	1,698,283.3
2	Աջափնյակ	3,786,505.9	3,688,630.4	97.4%	3,312,387.1	376,243.3
3	Ավան	1,723,795.1	1,704,832.9	98.9%	1,628,747.0	76,085.9
4	Արաբկիր	3,062,753.3	3,032,628.3	99.0%	3,039,632.3	-7,004.0
5	Դավթաշեն	1,609,385.3	1,540,442.1	95.7%	1,518,501.6	21,940.5
6	Էրեբունի	2,536,221.6	2,494,869.0	98.4%	2,322,089.0	172,780.0
7	Կենտրոն	4,233,242.6	3,505,462.7	82.8%	3,430,118.0	75,344.7
8	Մալաթիա-Սեբաստիա	3,946,381.7	3,789,734.8	96.0%	3,531,567.9	258,166.9
9	Նոր Նորք	4,161,361.8	4,022,773.6	96.7%	4,073,809.9	-51,036.3
10	Նորք-Մարաշ	962,233.0	905,719.1	94.1%	717,937.8	187,781.3
11	Նուբարաշեն	746,296.4	720,462.5	96.5%	731,416.8	-10,954.3
12	Շենգավիթ	4,075,707.1	3,927,554.4	96.4%	4,291,449.7	-363,895.3
13	Քանաքեռ-Զեյթուն	2,494,439.8	2,438,939.2	97.8%	2,338,778.5	100,160.7
Ընդամենը		120,290,867.3	113,699,633.8	94.5%	111,165,737.1	2,533,896.7

Ստորև ներկայացվում են Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեով կատարված ծախսերի վերլուծությունը և հիմնավորումը՝ ըստ ծախսային ծրագրերի.

1. Կառավարման մարմնի պահպանում ծրագրով 2024 թվականի բյուջեով նախատեսվել էր 12,565,062.0 հազար դրամ, որից փաստացի կատարվել է 12,154,621.5 հազար դրամ կամ նախատեսվածի 96.7%-ը, որը ավել է 2023 թվականի փաստացի կատարողական ցուցանիշից 1,754,740.4 հազար դրամով: Ծրագրի գծով 2024 թվականի խնայողությունը կազմել է 410,440.5 հազար դրամ, որից միայն աշխատավարձի և պարգևատրման գծով ծախսերի տնտեսումը կազմել է 121,987.9 հազար դրամ: Այս ծախսերն իրականացվել են հիմնականում՝ հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի (այդ թվում՝ Երևան քաղաքի

բյուջեի միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկի՝ «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային կառավարչական հիմնարկ») կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին (ներառյալ վարչական շրջաններին) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը և գործունեության առանձնահատկությունները: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում.

Աշխատավարձի գծով ծախսերը կազմում են՝ 8,112,592.1 հազար դրամ՝ նախատեսված 8,170,225.7 հազար դրամի դիմաց կամ 99.3%: Աշխատավարձի գծով ծախսերն իրականացվել են Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշումով սահմանված հաստիքացուցակի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով:

Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմի աշխատողների պարգևատրման գծով ծախսերը կազմել են 1,681,863.5 հազար դրամ՝ նախատեսված 1,746,217.8 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 96.3%:

Էներգետիկ ծառայությունների գծով ծախսերը կազմել են 199,562.6 հազար դրամ՝ նախատեսված 249,960.4 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 79.8%, որը ներառում է Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների վարչական շենքերի էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը:

Կոմունալ ծառայությունները ներառում են վարչական շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև դեռատիզացիոն ծառայությունների հետ կապված ծախսերը, որի գծով փաստացի ֆինանսավորումը կազմել է 14,598.5 հազար դրամ՝ նախատեսված 19,260.7 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 75.8%:

Կապի ծառայությունների գծով ծախսերը կազմել են 278,192.6 հազար դրամ՝ նախատեսված 328,863.5 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 84.6%, որը պակաս է 2023 թվականի փաստացի կատարողական ցուցանիշից 8,112.5 հազար դրամով, և ներառում են փոստային, քաղաքային հեռախոսակապի, բջջային կապի, ինտերնետային և օպտիկական կապուղու ծառայությունների, պլանշետների շահագործումն ապահովող VPN քարտերի սպասարկման համար տրամադրված գումարները:

Ապահովագրական ծախսերը կազմել են 7,543.0 հազար դրամ՝ նախատեսված 14,281.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 52.8%, որն ուղղվել է Երևանի քաղաքապետարանի (ներառյալ՝ վարչական շրջանների) հաշվեկշռում հաշվառված թվով 125 ավտոմեքենաների պարտադիր ապահովագրական ծախսերին:

Գույքի և սարքավորումների վարձակալության գծով ծախսերը կազմել են 66,444.8 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 99.5%, որը ավել է 2023 թվականի փաստացի ցուցանիշից 24,547.3 հազար դրամով: Այս գումարի շրջանակներում տարեսկզբից ապահովվել է քաղաքապետարանի թվով 20 ծառայողական ավտոմեքենաների

վարձակալությունը, որը ներառում է նաև այդ ավտոմեքենաների ընթացիկ նորոգումը, վառելիքի ծախսը և այլն:

Արտասահմանյան գործուղումների գծով ծախսերը կազմել են 55,393.6 հազար դրամ՝ նախատեսված 57,800.0 հազար դրամի դիմաց, կատարողականը կազմել է 95.8%: Գործուղումներ են կազմակերպվել դեպի ԱՊՀ, Եվրոպա, Ասիա, ԱՄՆ, ընդհանուր 28 այց: Բոլոր ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներով:

Վարչական ծառայությունների գծով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում գրքերի (փաստաթղթերի) կարման և թարգմանչական ծառայությունների համար ծախսերը կազմել են 5,404.6 հազար դրամ՝ նախատեսված 12,039.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 44.9%, որը պակաս է 2023 թվականի փաստացի ցուցանիշից 1,466.8 հազար դրամով:

Համակարգչային ծառայությունների գծով ծախսերը կազմել են 79,885.9 հազար դրամ՝ նախատեսված 85,081.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 93.9%-ով, ինչը ներառում է՝ քաղաքապետարանի եկամուտների կառավարման էլեկտրոնային համակարգի, տեղական տուրքերի, հողի վարձակալության հաշվառման (բազայի), վճարումների ընդունման առցանց համակարգի, գանձապետական և բյուջեի նախագծման ու կառավարման համակարգչային առկա ծրագրերի, Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների հաշվապահական հաշվառման համակարգերի, փաստաթղթաշրջանառության համակարգի, աշխարհագրական տեղեկատվական համակարգի, ինչպես նաև առևտրի ծառայությունների ոլորտին վերաբերվող՝ ոգելից խմիչքի, ծխախոտի վաճառքի, ինչպես նաև հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի սպասարկման ծառայությունները:

Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների գծով նախատեսված 13,490.0 հազար դրամի դիմաց կատարվել է 2,490.0 հազար դրամի ծախս, որի շրջանակներում նեղ մասնագիտական և կոմպետենցիաների վերապատրաստում անցել են թվով 60 աշխատակիցներ, համայնքային ծառայողի վերապատրաստում՝ թվով 58 աշխատակիցներ, սակայն այս մասով փաստացի ֆինանսավորումը կիրականացվի 2025 թվականին:

Տեղեկատվական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 17,306.1 հազար դրամ՝ նախատեսված 28,488.4 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 60.7%-ով: Այս ծախսերը ներառում են տպագրական, տեղեկատվական տեսաձրագրերի արտադրության, լրատվամիջոցներում տեղեկատվությունների հրապարակման, սոցիալական մեդիա մարքեթինգի ծառայություն, թվային տպագրության, 2D հոլովակի պատրաստման, թերթերում հայտարարությունների տպագրման ծառայությունների ձեռք բերման ծախսերը:

Կառավարչական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 2,880.0 հազար դրամ՝ նախատեսված 3,880.0 հազար դրամի դիմաց կամ 74.2%-ով, որի շրջանակներում իրականացվել է Երևանի քաղաքապետարանի 2023 թվականի բյուջեի անկախ աուդիտ անցկացնելու աուդիտորական մասնագիտացված կազմակերպության ծառայությունը:

Ներկայացուցչական ծախսերի գծով փաստացի կատարողականը կազմել է 43,859.5 հազար դրամ՝ նախատեսված 48,605.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է շուրջ 90.2%-ով, ինչի շրջանակներում իրականացվել է Երևան ժամանած պատվիրակությունների ընդունելությունը, հուշանվերների ձեռքբերումը:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով ծախսերը կազմում է 53,200.7 հազար դրամ, որից 36,633.8 հազար դրամը ուղղվել է Երևանի քաղաքապետարանի վարչական շենքերի հասարակական կարգի պահպանման ծառայությանը, 482.5 հազար դրամը՝ Աջափնյակ վարչական շրջանի համակարգչային և հեռախոսային նոր լրկալ ցանցի տեղադրաման աշխատանքներին, 16,084.4 հազար դրամով իրականացվել են տարեվերջյան ամանորյա միջոցառումներ՝ շնորհակալագրերի, պատվոգրերի, մեդալների հանձնման արարողություններ: Ծրագրի գծով նախատեսված ցուցանիշը կատարվել է 99.8%-ով:

Մասնագիտական ծառայությունների գծով փաստացի ֆինանսավորումը կազմել է 11,167.0 հազար դրամ՝ նախատեսված 16,562.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 67.4%-ով, ինչը 1,642.0 հազար դրամով ավել է նախորդ տարվա փաստացի ցուցանիշից, իսկ մատուցված ծառայությունները ներառում են փաստաթղթերի արխիվացման, գազասպառման համակարգի սպասարկման, հակահրդեհային ծառայության, վարչական շենքերի վերելակների փորձաքննության, ինչպես նաև հնոցապանի ծառայությունները:

Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման գծով փաստացի կատարողականը կազմել է 238,267.4 հազար դրամ՝ նախատեսված 280,431.3 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 85.0%, ինչը 11,715.2 հազար դրամով պակաս է 2023 թվականի ցուցանիշից: Այս հոդվածով նախատեսված գումարների շրջանակներում իրականացվել են քաղաքապետարանի (ներառյալ՝ վարչական շրջանների) հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների պահպանման և նորոգման, գույքի, համակարգչային տեխնիկայի և շահագործվող այլ սարքավորումների ընթացիկ նորոգումն ու պահպանումը:

Գրասենյակային նյութեր և հագուստ հոդվածով փաստացի իրականացվել է 46,694.3 հազար դրամի ծախս՝ նախատեսված 49,907.2 հազար դրամի դիմաց կամ կատարվել է 93.6%-ով: Նշված հոդվածի շրջանակներում ձեռք են բերվել գրասենյակային նյութեր (թուղթ, գրիչ, արագակար, մատիտ, թղթապանակ, ռեգիստր և այլն), ինչպես նաև համազգեստներ վարչական շենքերի մաքրուիիների և սպասարկող անձնակազմի համար:

Տրանսպորտային նյութերի գծով փաստացի կատարողականը կազմել է 221,243.6 հազար դրամ՝ նախատեսված 229,267.3 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 96.5%, ինչը ներառում է վարչական շրջաններին սպասարկող ավտոմեքենաների վառելիքի, քսանյութի և անվադողերի ձեռք բերման ծախսերը, ինչպես նաև քաղաքապետարանի աշխատակազմի որոշ ստորաբաժանումների գործառուֆային առանձնահատկություններով պայմանավորված անձնական ավտոմեքենաները ծառայողական նպատակներով օգտագործման համար տրված վառելիքի ծախսերը:

Կենցաղային և հանրային սննդի նյութերի գծով փաստացի ծախսը կազմել է 22,866.9 հազար դրամ՝ նախատեսված 24,356.9 հազար դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել խմելու ջուր, տնտեսական ապրանքներ:

Հատուկ նպատակային այլ նյութերի գծով փաստացի կատարողականը կազմել է 10,591.9 հազար դրամ՝ նախատեսված 17,785.3 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 59.6% և ներառում է տոնական և հիշատակի օրերի, ինչպես նաև այլ միջոցառումների համար նախատեսված մեդալների, ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների ձեռք բերման ծախսերը:

Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին հողվածով փաստացի կատարողականը կազմել է 316,715.9 հազար դրամ, նախատեսվածի չափով: Այն իրենից ներկայացնում է «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ի պահպանման ծախսերը, այդ թվում՝ մաքրման ծառայությունները, նյութերի ձեռքբերումը, ընթացիկ այլ աշխատանքներ:

Այլ նպաստներ բյուջեից հողվածով փաստացի կատարողականը կազմել է 50,100.0 հազար դրամ՝ նախատեսված 58,500.0 հազար դրամի դիմաց, ինչի շրջանակներում «Երևան քաղաքի ավագանու անդամներին դրամական փոխհատուցում տրամադրելու մասին» Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 27-ի N 28-Ա և 2021 թվականի հոկտեմբերի 26-ի N 454-Ա որոշումներով սահմանված կարգով կատարված ծախսերի դիմաց փոխհատուցում է վճարվել Երևան քաղաքի ավագանու անդամներին:

Ընթացիկ դրամաշնորհներ պետական առևտրային կազմակերպություններին հողվածով ծախսը կազմել է 41,716.3 հազար դրամ նախատեսված 41,720.1 հազար դրամի դիմաց՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակիցների փոխադրումը աշխատանքային օրերին վեց ուղղություններով՝ առավոտյան և աշխատաժամանակի ավարտին կազմակերպելու համար:

Պարտադիր վճարների գծով փաստացի կատարողականը կազմել է 34,363.0 հազար դրամ՝ նախատեսված 39,889.8 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվել և իրականացվել են քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված մեքենաների տեխնիկական զննման, ավտոկայանատեղի վճարների և այլ պարտադիր վճարման ծախսերը:

Տրանսպորտային սարքավորումների գծով փաստացի ծախսը կազմել է 286,977.0 հազար դրամ, ձեռք է բերվել թվով 22 մեքենա, մասնավորապես 20 հատ «BYD» մակնիշի, 1 հատ «Zeekr» մակնիշի և 1 հատ «Mercedes-Benz» մակնիշի մեքենաներ:

Վարչական սարքավորումների գծով փաստացի ծախսը կազմել է 159,987.5 հազար դրամ՝ նախատեսված 201,512.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 79.4%, ինչը 67,982.1 հազար դրամով պակաս է 2023 թվականի նույն ցուցանիշից: Այն ուղղվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում անհրաժեշտ գույքի ձեռք բերմանը, ինչպես նաև շահագործման համար ոչ պիտանի գույքի և տեխնիկայի (այդ թվում՝ համակարգչային) փոխարինմանը:

Այլ մեքենաներ և սարքավորումներ հողվածով նախատեսված 40,124.9 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 29,767.6 հազար դրամ, որը ուղղվել է աշխատակազմի ստորաբաժանումներում անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերմանը, որից 20,637.9 հազար դրամի շրջանակներում ընդլայնվել է Երևան քաղաքապետարանի (Արգիշտի 1 հասցեում գտնվող մասնաշենք) նիստերի դահլիճի էլեկտրոնային քվեարկության համակարգի ֆունկցիոնալ հնարավորությունները, 3,108.6 հազար դրամով ձեռք է բերվել ինտերակտիվ մոնիտոր, ինչպես նաև Ավան, Նուբարաշեն և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների համար ձեռք է բերվել անցակետային կառավարման սարք, հսկողության համակարգ, տեսանկարահանման համակարգ, ցանցային համակարգ, օդորակիչներ և խոտհնձիչներ:

Ոչ նյութական հիմնական միջոցներ հողվածով փաստացի ծախսը կազմել է 62,945.6 հազար դրամ՝ նախատեսված 63,000.0 հազար դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում 17,945.6 հազար դրամի դիմաց իրականացվել է տվյալների անվտանգության և հակավիրուսային համակարգչային փաթեթների արտոնագրերի երկարացում, 45,000.0 հազար դրամի դիմաց ձեռք է բերվել տարածատեղեկատվական «GIS» համակարգի ծրագրային ապահովման արտոնագրեր:

2. Վարչական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 175,143.4 հազար դրամ, նախատեսված 190,578.2 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 91.9%, ինչը 214,943.0 հազար դրամով պակաս է 2023 թվականի նույն ցուցանիշից: Իրականացվել են ընթացիկ նորոգման աշխատանքներ Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի վարչական շենքերում:

3. Երևան քաղաքին միջազգային վարկանիշ շնորհելու ծրագրով նախատեսված 10,321.5 հազար դրամի դիմաց իրականացվել է 10,321.4 հազար դրամի ծախս՝ 2023 թվականի փաստացի ցուցանիշից 5,568.5 հազար դրամով պակաս: Fitch միջազգային վարկանիշային գործակալությունը Երևան քաղաքին շնորհվել է երկարաժամկետ «BB-» վարկանիշը՝ «Կայուն» կանխատեսմամբ, որը տարեվերջին վերահաստատվել է Fitch միջազգային վարկանիշային գործակալության կողմից:

4. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով փաստացի ծախսը կազմել է 33,983.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, ինչը 1,940.6 հազար դրամով ավել է 2023 թվականի նույն ցուցանիշից: Այս ծրագրով բոլոր ծախսերը իրականացվել են ՀՀ 2024 թվականի պետական բյուջեից՝ որպես պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորություններ:

5. Նախագծային աշխատանքներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 205,170.9 հազար դրամ՝ նախատեսված 514,845.8 հազար դրամի դիմաց, որը պակաս է 2023 թվականի փաստացի ցուցանիշից 629,068.4 հազար դրամով: Նշված գումարի շրջանակներում ձեռք են բերվել առաջիկա տարիներին նախատեսվող որոշ կապիտալ ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերը, ինչպես նաև Երևանի մետրոպոլիտենի Աջափնյակ կայարանի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պարզ փորձաքննությունը:

6. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծություն ծրագրով փաստացի ծախսը կազմել է 990.0 հազար դրամ՝ նախատեսված 1,810 հազար դրամի դիմաց՝ 2023 թվականին փաստացի ծախս չի իրականացվել:

7. Դիմումներ, հայցադիմումներ, դատարանի որոշումների և վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս սահմանված վճարումներ ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 166,348.1 հազար դրամ՝ նախատեսված 169,763.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.0%, որը պակաս է 2023 թվականի փաստացի ցուցանիշից 140,360.4 հազար դրամով: Ծրագրերի շրջանակներում իրականացվել են դատական ընթացակարգերի հետ կապված ծախսեր:

8. Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 19,405.1 հազար դրամի ծախս՝ 29,378.7 հազար դրամի դիմաց, որը 2023 թվականի փաստացի ցուցանիշից 2,662.6 հազար դրամով պակաս է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Երևան համայնքի սեփականություն համարվող շենքերի, շինությունների, հողամասերի չափագրման/հաշվառման/, ինչպես նաև գույքի/շարժական և անշարժ/ շուկայական գնահատման և հաշվետվությունների տրամադրման ծառայություններ:

9. Քաղաքացիական պաշտպանությանն աջակցություն ծրագրով փաստացի ծախսը կազմել է 109,910.6 հազար դրամ՝ նախատեսված 170,014.3 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 64.6%՝ 2023 թվականի փաստացի ցուցանիշից 38,573.9 հազար դրամով ավել: Ծրագրի շրջանակներում 57,565.4 հազար դրամով իրականացվել է Երևան քաղաքի հակահրդեհային հիդրանտների վերանորոգման աշխատանքներ, 38,700.0 հազար դրամի դիմաց տեղադրվել են ձայնային ազդանշանային սարքեր՝ էլեկտրաշակներ, ձեռք է բերվել նաև հրշեջի ձեռնոցներ և այլ գույք ու տեխնիկա, իրականացվել է և ազդարարման համակարգի հեռավար կառավարման բլոկների, ինչպես նաև էլեկտրաշակների վերանորոգման և ընթացիկ սպասարկման ծառայություններ:

10. Այլընտրանքային աշխատանքային ծառայություն ծրագրով փաստացի ծախսը կազմել է 8,580.0 հազար դրամ՝ նախատեսված 8,950.0 հազար դրամի դիմաց, կամ ընդհանուր կատարողականը կազմել է 95.9%, ինչը 360.0 հազար դրամով պակաս է 2023 թվականի նույն ցուցանիշից: Ծրագրով իրականացվել է հաշվետու տարվա ընթացքում զորակոչի արդյունքում Երևանի ենթակայության կազմակերպություններում՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն», «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» և «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ում այլընտրանքային աշխատանքային ծառայողներին կատարվող վճարումները:

11. Իրավախախտ շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխման և պահպանման ծառայություն ծրագրով նախատեսված 15,000.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 8,897.0 հազար դրամ՝ 59.3%, որը 2023 թվականի փաստացի ցուցանիշից 2,550.0 հազար դրամով պակաս է: Ծրագրով թվով 31 իրավախախտ շրջիկ առևտրի կետերը և տրանսպորտային միջոցները տեղափոխվել են հատուկ տարածք:

12. Ինքնակամ տեղադրված առևտրի ծառայությունների մատուցման օբյեկտների ապամոնտաժման, տեղափոխման և պահպանման ծառայություններ ծրագրով իրականացվել է 9,750.0 հազար դրամի ծախս՝ նախատեսված 15,000.0 հազար դրամի դիմաց, կամ 2023 թվականի նույն ցուցանիշից 6,750.0 հազար դրամով պակաս: Ծրագրով իրականացվել է շուրջ 65 ինքնակամ տեղադրված օբյեկտների ապամոնտաժման և տեղափոխման ծառայություն:

13. Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 130,519.7 հազար դրամ՝ նախատեսված 158,587.5 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 82.3%, որը 2023 թվականի փաստացի ցուցանիշից 207,158.4 հազար դրամով պակաս է: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Էրեբունի վարչական շրջանի Մուրացան 113 հասցեում ոռոգման ցանցի կառուցում, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Անդրանիկի փողոցի վերջնամասում պոմպակայանի կառուցում, Նոր Նորք վարչական շրջանում Լյուքսեմբուրգի 11, Լյուքսեմբուրգի 1-ին նրբ. 4 և 6 շենքերի միջև ոռոգման ցանցի կառուցում, ինչես նաև իրականացվել են պայմանագրային անցումների համար վճարումներ:

14. Նոր Խարբերդ թաղամասում գազատարի կառուցում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 135,252.9 հազար դրամ՝ նախատեսված 135,341.2 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 99.9%, որպես 2023 թվականի պայմանագրի անցում: 10600մ երկարությամբ Նոր Խարբերդ թաղամասում գազատարի կառուցման աշխատանքները մեկնարկել են դեռևս 2023 թվականին, պետության աջակցությամբ, 385,244.2 հազար դրամ և ավարտվել 2024 թվականին համայնքի բյուջեի համաֆինանսավորմամբ:

15. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության ծրագիր» և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող Երևանի

Էներգաարդյունավետության դրամաշնորհային ծրագիր և Երևանի

Էներգաարդյունավետության ծրագրի համաֆինանսավորում ծրագրերով իրականացվել է 903,706.0 հազար դրամի ծախս նախատեսված 1,031,888.7 հազար դրամի դիմաց, որը 2023 թվականի փաստացի ցուցանիշից 464,509.7 հազար դրամով պակաս է: Ծրագրի շրջանակներում սեյսմիկ արդիականացման, էներգախնայողության բարելավման և վերակառուցման աշխատանքները շարունակվել են իրականացվել Երևանի հհ. 22, 23, 74, 161, 135, 138 մանկապարտեզներում, ընդ որում հհ. 22, 23, 161, 135 մանկապարտեզներում աշխատանքներն ավարտված են, իսկ հ. 74 և հ.138 մանկապարտեզներում աշխատանքները կշարունակվեն նաև 2025 թվականի ընթացքում: Ընդամենը գումարից 40,845.4 հազար դրամն ուղղվել է ստացված վարկի տոկոսավճարի մարմանը, իսկ 122,457.7 հազար դրամը տրամադրվել է ՀՀ 2024 թվականի պետական բյուջեից որպես կապիտալ սուբվենցիա՝ աշխատանքների ԱԱՀ-ի մասով համաֆինանսավորմանը:

16. Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում ծրագրով փաստացի կատարողականը կազմել է 3,969,866.5 հազար դրամ՝ նախատեսված 4,281,068.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 92.7%, ինչը 2023 թվականի փաստացի ցուցանիշից 1,398,673.6 հազար դրամով ավել է: Ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների փողոցներում, մայթերում և բակային տարածքներում իրականացվել են 376465.0 քմ մակերեսով ասֆալտապատման ընթացիկ և փոսային նորոգման աշխատանքներ, թվով 223 դիտահորերի և թվով 18 անձրևորսիչների ապատեղակայման և տեղակայման, ինչպես նաև նորերի տեղադրման աշխատանքներ, 475000.0 գծմ երկարությամբ ճաքալցման աշխատանքներ: Ծրագրով իրականացվել են նաև Թևոսյան հ.9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲ ընկերության հավաքակայանի տարածքի 6920 քմ մակերեսով ասֆալտապատման և Ավան, Էրեբունի, Կենտրոն, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների փողոցների 304191 քմ մակերեսով միջին նորոգման աշխատանքներ հետևյալ հասցեներում՝ Աշխաբադի փողոց, Բաղյան փողոց, Գալշոյան փողոց, Հունան Ավետիսյան փողոց, Վիլնյուսի փողոց, Նելսոն Ստեփանյան փողոց, Թոթովենցի փողոց 2-րդ կտոր, Արմենակյան փողոց, Է. Իսաբեկյան փողոց, Ս. Բաղդասարյան փողոց, Սասունցի Դ. փողոց, Վ. Աճեմյան փողոց, Աթոյան փողոց, Այվազովսկու փողոց, Ռոստովյան փողոց, Նուբարաշենի 7-րդ փողոց, Նուբարաշենի 12-րդ և Նոր Զմյուռնիայի փողոցներ, Չնքուշի փողոց, Նուբարաշենի 11-րդ փողոց, Մինաս Ավետիսյան փողոց, Է. Հասրաթյան փողոց, Քանաքեռի 1-ին փողոց, Նորագավիթ 2, 5-7, 11-13 փողոցներ, Կատովսկու փողոց, Հանրապետության հրապարակ և Վ. Սարգսյան փողոց, որի շրջանակներում իրականացվել է նաև դիտահորերի և անձրևորսիչների ապատեղակայման, տեղակայման ու նորերի տեղադրման աշխատանքներ:

17. Եզրաքարերի վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 109,846.2 հազար դրամ՝ նախատեսված 121,646.2 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 90.3%՝ 2023 թվականի նույն ցուցանիշից 173,637.3 հազար դրամով պակաս:

Վարչական շրջաններում իրականացվել են 7956.3 գծմ եզրաքարերի ընթացիկ նորոգման, ինչպես նաև փողոցների հին եզրաքարերի փոխարինման աշխատանքներ: Մասնավորապես, աշխատանքներն իրականացվել են աղյուսակ 4-ում ներկայացված հասցեներում:

Աղյուսակ 4.

Եզրաքարերի վերանորոգում ծրագրով իրականացված աշխատանքները՝ ըստ հասցեականության և կատարված արդյունքի

Վարչական շրջան	Հասցեների անվանումը	Կատարված աշխատանքների արդյունք (գծմ)
Աջափնյակ վարչական շրջան	Նորաշեն 1-ին և 3-րդ շրթա., Ֆուչիկի 1-ին նրբ.և Նորաշեն թաղ. 2-րդ շրթա	1480.0
Ավան վարչական շրջան	Դ.Մալյան և Հր. Աճառյան փողոցներ	250.0
Դավթաշեն վարչական շրջան	Դավթաշեն 2-րդ թաղամաս 46, 39, 41 շենքեր	638.0
Էրեբունի վարչական շրջան	Գլինկայի փող. հ.3 ուսումնարանի դիմաց, Բելինսկի փող. 1 տան դիմաց, Խորենացի փող. 164/1-211, Տիգրան Մեծ Գլինկա խաչմերուկ 3-րդ գրադարանի դիմաց:	297.2
Կենտրոն վարչական շրջան	Սայաթ-Նովա 20, 11, 27, 16, Արամի 64, Բաղրամյան 68, Մաշտոց-Թումանյան, Մաշտոց-Պուշկին, Մաշտոց-Ամիրյան, Մաշտոց-Սարյան խաչմերուկներ, Հաղթանակի կամրջի դիմաց, Փարպեցի եկեղեցու մոտ, Մաշտոցի պողոտա, Ծիծեռնակաբերդի խճուղի, Աբովյան 36, Մյասնիկյան 1, Ֆրանսիայի հրապարակ, Մոսկովյան, Սարյան, Տերյան այգու դիմաց, Տերյան 91, Արամ, Պուշկին,	910.0
Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	Ռ. Մելիքյան, Անդրանիկի, Րաֆֆու, Սեբաստիա, Օհանովի փողոցներ	1898.0

Նոր Նորք վարչական շրջան	Ն. Ստեփանյան փողոց	457.0
Նորք-Մարաշ վարչական շրջան	Նորքի այգիներ, Է. Իսաբեկյան, Ս. Բաղդասարյան, Օհան Դուրյան, Ա. Արմենակյան, Գ. Հովսեփյան փողոցներ	598.4
Նուբարաշեն վարչական շրջան	Նուբարաշեն 7 փողոց	166.7
Շենգավիթ վարչական շրջան	Արագածի փողոց, Չեխովի փողոց	1261.0
ԸՆԴԱՄԵՆԸ		7956.3

18. Հենապատերի վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 253,021.1 հազար դրամ՝ նախատեսված 280,725.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 90.1%, ինչը 121,483.7 հազար դրամով ավել է 2023 թվականի նույն ցուցանիշից: Ծրագրի շրջանակներում ընթացիկ նորոգվել են Գ. Մահարու փողոցի 1272., Սարի Թաղ 5-6 շարքերի, Գալշոյան 2-ին հարակից, Գալշոյան 48, Բաղալ Մուրադյան, Քոչարյան 18, Մոլդովական 46, Մոլդովական փ. Գայի 23-ին հարակից, Գյուլիքեվիյան 7, Աշոտ Հովհաննիսյան 4, Աշոտ Հովհաննիսյան 8/1, Շոպրոնի 3-րդ նրբ. 5-րդ շենք, Գայի պողոտա, Նոր Նորքի 7-րդ զանգված 132., Արարադյան փ., Կապովսկի փ., Շենգավիթ փ., Արշակունյաց պողոտայի և Գ. Նժդեհի փողոցի գեղանկարներ, Լեփսիուսի 8 շ., Ռուբինյանց 2/1 շ., Հասրաթյան 7/3,7/4,7/5 շենքերին կից, հ. 121 դպրոցի հերթամասում գտնվող խաղաղաշփոխ հարակից, հ. 95 մանկապարտեզին հարակից, Բաբաջանյան 31 շ.-ից դեպի 35 շ., Բաբաջանյան 153, 155 շենքերի ներքևի մասում, Բաբաջանյան 157 շենքի դիմացի մասում, Օհանովի 54 շենքից դեպի Սվաճյան 12/1 շենք տանող անցուղուն կից, Բաբաջանյան 29/1, 27/1 շենքերի դիմացի մասում, Բաբաջանյան 31 շենքի երեսամասին հարակից, Բաբաջանյան 5/1 շենքի ներքևի մասում գտնվող տարածքների հենապատերը, ինչպես նաև հիմնանորոգվել են և կառուցվել հենապատեր աղյուսակ 5-ում ներկայացված հասցեներում:

Աղյուսակ 5.

Հենապատերի վերանորոգում ծրագրով իրականացված կապիտալ աշխատանքները՝ ըստ հասցեականության և կատարված արդյունքի

Վարչական շրջան	Հասցեների անվանումը	Կատարված աշխատանքների արդյունք
Արաբկիր վարչական շրջան	<ol style="list-style-type: none"> Փափագյան 2-րդ նրբ. հենապատի հիմնանորոգում Կիլյան 11 հենապատի հիմնանորոգում 	276.5 քմ
Կենտրոն վարչական շրջան	<ol style="list-style-type: none"> Վարդանանց 32 հենապատի հիմնանորոգում Ձորափից դեպի հիվանդանոց գտնվող հենապատի հիմնանորոգում 	641.8 քմ
Նոր Նորք վարչական շրջան	<ol style="list-style-type: none"> Նորքի 8-րդ գ.28 շենքի հենապատի կառուցում 	1765.9 խմ
Նորք-Մարաշ վարչական շրջան	<ol style="list-style-type: none"> Ա. Արմենակյան 2/4 հասցեի դիմաց գտնվող հենապատի բարձրացում Նորքի այգիներ փողոցից դեպի եկեղեցի տանող պարսպի կառուցում Թիվ 124 մանկապարտեզի պարսպի կառուցում 	218.5 քմ
	2023 թվականի պայմանագրի անցումներ	
	<ol style="list-style-type: none"> Ս. Խանզադյան փողոցի մետաղական արգելապատնեշի կառուցում Թիվ 121 մանկապարտեզի պարսպի կառուցում 	115.5 մ 86.3 քմ

19. Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 82,382.9 հազար դրամ՝ նախատեսված 89,473.5 հազար դրամի դիմաց, ինչը 22,462.7 հազար դրամով ավել է 2023 թվականի նույն ցուցանիշից: Ծրագրի շրջանակներում Գարեգին Նժդեհի փողոցի շուկայի հարևանությամբ, Իսակովի պողոտայում ավտոկայանի հարևանությամբ, Կոմիտասի շուկայի հարևանությամբ, Տիգրան Մեծ պողոտա՝ «Ռոսիա մոլ» առևտրի կենտրոնի հարևանությամբ, Բաղրամյան պողոտայի թիվ 76 հիմնական դպրոցի հարևանությամբ, Ազատության պողոտայի «Հաղթանակ» զբոսայգու հարևանությամբ, Կոմիտասի 38 շենքի հարևանությամբ, Գալի

պողոտա՝ Սաֆարյան և Նելսոն Ստեփանյան փողոցների հատույթում գտնվող ստորգետնյա անցումներում տեղադրվել են թվով 16 հորիզոնական վերելակներ:

20. Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 150,991.3 հազար դրամ՝ նախատեսված 394,210.5 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 38.3%, որը 2023 թվականի փաստացի ցուցանիշից 84,850.7 հազար դրամով պակաս է: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել են Երևան քաղաքի թվով 8 կամուրջների, թվով 2 տրանսպորտային հանգույցների, թվով 10 վերգետնյա հետիոտնային անցումների, թվով 7 ուղեատարների և թվով 21 ուղեանցների նորոգման, շահագործման ու պահպանման աշխատանքները, շարունակվել և ավարտին են հասցվել «Հաղթանակ» կամրջի բարեկարգման և թվով 2 հորիզոնական վերելակների տեղադրման աշխատանքները, ինչպես նաև մեկնարկել են Արգավանդի երկաթուղային կամրջի սյուների ամրացման, ծածկի սալի ջրահեռացման և Հրազդանի մեծ կամրջի (Կիևյան կամուրջ) վերանորոգման աշխատանքները (վերջինիս աշխատանքները շարունակական են):

21. Հրազդանի կիրճի բարեկարգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,779.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, կամ 2023 թվականի փաստացի ցուցանիշից 81.6 հազար դրամով ավել, որի շրջանակներում իրականացվել են թափվող քարերից Հրազդանի կիրճում գտնվող տարածքի մաքրման ծառայություններ:

22. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 962,505.5 հազար դրամ՝ նախատեսված 1,288,506.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 74.7%, ինչը 2023 թվականի փաստացի ցուցանիշից 515,295.9 հազար դրամով ավել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Երևան քաղաքի փողոցների մայթերի կառուցման, վերակառուցման, ինչպես նաև մայթերի վերանորոգման (սալիկապատման) աշխատանքներ, մասնավորապես, աշխատանքներ են իրականացվել աղյուսակ 6-ում ներկայացված հասցեներում:

Աղյուսակ 6.

Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում ծրագրով իրականացված աշխատանքները՝ ըստ հասցեականության և կախարված արդյունքի

Վարչական շրջան	Հասցեների անվանումը	Կատարված աշխատանքների արդյունք
Աջափնյակ վարչական շրջան	Նորաշեն թաղամաս, Բեկնազարյան և Հալաբյան փողոցների մայթերի <i>ընթացիկ</i> սալիկապատում	1400 քմ

Ավան վարչական շրջան	Խուղյակով փողոցի մայթի ընթացիկ սալիկապատում	350 քմ
Դավթաշեն վարչական շրջան	Ա. Միկոյան փողոցի անցուղիների տարածքում բետոնե սալիկներից հատակների պատրաստման ընթացիկ աշխատանքներ (2023թ. պայմանագիր)	300 քմ
Էրեբունի վարչական շրջան	Ազատամարտիկների այգու և հարակից մայթի սալիկապատում (կապիտալ աշխատանք)	1515 քմ
Կենտրոն վարչական շրջան	Բետոնե մայթերի սալիկների ընթացիկ տեղադրում (2023թ. Պայմանագիր)՝ Մաշտոցի պողոտա, Վարդանանց փողոց՝ Վարդան Մամիկոնյան արձանի ուղղությամբ, Փարպեցի, Հանրապետության, Թումանյան, Երվանդ Քոչար, Խանջյան, Չարենցի, Նալբանդյան, Պուշկինի, Սայաթ-Նովա, Տերյան փողոցներ	2000քմ
	Բազալտե սալիկների տեղադրում (կապիտալ աշխատանքներ)՝ Հանրապետության-Տպագրիչներ երկկողմանի 2023թ. Պայմանագրեր՝ Պուշկին 72, Չարենցի 2-րդ նրբանցք, Չարենց Սարալանջ, Սայաթ-Նովա Կոնսերվատորիա, Մոսկովյան Թումանյան արձանի մոտ, Սարյան 24/1 (Ամիրյանից Լեռ)	6715.1 քմ
Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	Մայթերի վերանորոգման ընթացիկ աշխատանքներ՝ Անդրանիկի փ.հ. 88 շենքից դեպի հ.95 մանկապարտեզ տանող մայթ, Անդրանիկի փողոցից դեպի Անդրանիկի փ.հ. 102 շ.տանող ճանապարհի մայթ, Իսակովի պող. հ.26 շենքի վերջնամասից դեպի Հ/Ա Բ-2 թաղ. հ. 93 շենք տանող ճանապարհի աջակողմյան մայթ, Բաբաջանյան փողոցից դեպի Բաբաջանյան 97 շենքի ետնամաս տանող ճանապարհի մայթ, Բաբաջանյան 24 շենքի դիմացի մայթ	622.3 քմ

	<i>Մայթերի կապիտալ վերակառուցում՝ Սվաճյան փողոցի մայթ (Անդրանիկի փողոցից մինչև Շերամի փողոց տանող ճանապարհի աջակողմյան մաս)</i>	1345քմ
Նոր Նորք վարչական շրջան	<i>Կարախանյան փողոցում մայթի կառուցում</i>	267.4 քմ
Նորք-Մարաշ վարչական շրջան	<i>Նորք-Մարաշ վարչական շրջանի մայթերի ընթացիկ սալիկապատում</i>	829 քմ
Շենգավիթ վարչական շրջան	<i>Գ.Նժդեհի փողոց 21-27-29-31-35-37 մայթերի ընթացիկ սալիկապատում</i>	1933 քմ
Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջան	<i>Դ.Անհաղթ այգի, Դրոյի, Մ.Ավետիսյան, Ռուբինյանց փողոցների մայթերի ընթացիկ սալիկապատում</i>	4930 քմ
ԸՆԴԱՄԵՆԸ		22206.8 քմ

Ծրագրով Դավթաշեն-Աշտարակ ճանապարհամերձ հատվածի բնակելի շինությունների մոտ երթևեկության աղմուկի մակարդակի նվազեցման նպատակով տեղադրվել են աղմկապաշտպան պատեր, իրականացվել են Դավիթ Բեկ փողոցի հ. 7/5 հասցեի ճանապարհահատվածի երթևեկելի փլուզված մասի հիմնանորոգման, Նորք-Մարաշ վարչական շրջանի Գրիգոր Հովսեփյան փողոցից դեպի Սարալանջ տանող ճանապարհի կառուցման աշխատանքները, որոնք կշարունակվեն նաև 2025 թվականի ընթացքում, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շահումյան 1-ին փողոցին կից մայթի վերակառուցման աշխատանքների շրջանակներում 357 քմ մակերեսով հենապատի երեսպատում (բազալտե սալիկներով) և 388 գմ բազալտե եզրաքարերի տեղադրում, Բաբաջանյան-Աշտարակ և Արզավանդ-Շիրակ ճանապարհահատվածների շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողությունը:

23. Փողոցների պահպանում և շահագործում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 674.1 հազար դրամ՝ նախատեսված 5,188.3 հազար դրամի դիմաց, կատարողականը կազմել է 13.0%, կամ 2023 թվականի փաստացի ցուցանիշից 18,136.1 հազար դրամով պակաս, որի

շրջանակներում իրականացվել են լուսացույցերի համար SIM քարտերի սպասարկման և Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի էլ. էներգիայի ծախսերը:

24. Ավտոկայանատեղի կազմակերպման ծառայություններ ծրագրով փաստացի ծախսը կազմում է 422,450.0 հազար դրամ նախատեսված 428,034.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.7%, ինչը 2023 թվականի փաստացի ցուցանիշից 8,101.3 հազար դրամով պակաս է: Ծրագրի շրջանակներում 62,450.0 հազար դրամ գումարը հատկացվել է «Երևանտրանս» ՓԲԸ-ին՝ Ազատության պողոտայի ստորգետնյա ավտոկայանատեղիի պահպանման համար, իսկ 360,000.0 հազար դրամը՝ «Փարքինգ Սիթի սերվիս» ՓԲԸ-ին Երևան քաղաքում ավտոկայանատեղիի կազմակերպման համար:

25. Թեքահարթակների կառուցում ծրագրով նախատեսված 102,601.8 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 38.3 հազար դրամ՝ որպես նախորդ տարվա պայնմանագրի անցում: Ծրագրի շրջանակներում 2023 թվականին կատարողականը կազմել է 17,581.9 հազար դրամ:

26. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային զարգացման ներդրումային ծրագրի համակարգում և կառավարում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով փաստացի ծախսը կազմել է 45,153.0 հազար դրամ՝ նախատեսված 79,772.3 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 56.6%, ինչը 2023 թվականի փաստացի ցուցանիշից 91,267.6 հազար դրամով պակաս է:

27. Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 112,526.9 հազար դրամ՝ նախատեսված 324,171.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 34.7%՝ 2023 թվականի փաստացի ցուցանիշից 142,901.3 հազար դրամով պակաս, որի շրջանակներում տեղադրվել են մետաղական ճաղավանդակներ, 100 հատ դեկորատիվ թղթե շերտավոր պլաստիկից, 100 հատ թուջե ձուլվածքից շենքերի և փողոցների անվանումների միասնական ցուցանակներ, 50 հատ թուջե ձուլվածքից (4 թև) և 5 հատ թուջե ձուլվածքից (5 թև) փողոցների ուղենիշային ցուցանակներ: Միաժամանակ, 3,459.8 հազար դրամով իրականացվել է այգիներին մատակարարված էլեկտրաէներգիայի վճարումը, 3,002.7 հազար դրամով ձեռք է բերվել ճանապարհային նշանների համակարգ, 67,436.4 հազար դրամով վարչական շրջանները տեղադրել են մետաղական ճաղավանդակներ, լուսատուներ, աղբամաններ, նստարաններ և այլ գույք:

28. Ծանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում (պատվիրակված լիազորություններ) նախատեսված 825,875.6 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմում է 771,926.5 հազար դրամ, կամ 93.5%, որը 2023 թվականի փաստացի ցուցանիշից 181,737.6 հազար դրամով ավել է: Մասնավորապես, ծրագրի շրջանակներում իրականացվել են 2316491 գծմ գծանշման, 47888 քմ պահպանապատերի հարդարման և ներկման, 18349.72 քմ սառը և թերմո պլաստիկով գծանշումների, թվով 305 լուսազդանշանների պահպանման ծառայություններ, տեղադրվել են թվով 155 լուսային

ազդանշանային սարքեր: Միաժամանակ, 47,280.7 հազար դրամով իրականացվել է լուսացույցերի էլեկտրաէներգիայի մատակարարման վճարումներ:

29. Տրանսպորտային համակարգի արդիականացում ծրագրով նախատեսված 8,634,083.5 հազար դրամի դիմաց կատարվել է 8,076,620.5 հազար դրամի ծախս՝ 2023 թվականի փաստացի ցուցանիշից 1,914,499.3 հազար դրամով ավել: Նշված ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել թվով 171 ավտոբուսներ՝ 6,300,000.0 հազար դրամի չափով և 14 տրոլեյբուսներ՝ 1,416,800.0 հազար դրամի չափով, սակայն ևս 1 տրոլեյբուսի համար փաստացի վճարում չի իրականացվել, քանի որ այն գտնվել է փորձաքննության փուլում: 126,520.5 հազար դրամն ուղղվել է թվով 171 միավոր «Zhong Tong» մակնիշի ավտոբուսների մաքսազերծման համար բնապահպանական հարկի վճարմանը: Դեռևս 2023 թվականից մեկնարկած Լենինգրադյան 16 հասցեի վարչական շենքի՝ որպես կառավարչական կենտրոնի վերակառուցման աշխատանքները շարունակվել են նաև 2024 թվականի ընթացքում և փաստացի ֆինանսավորվել 233,300.0 հազար դրամի չափով: Պայմանագրի անցման շրջանակներում աշխատանքները կշարունակվեն նաև 2025 թվականին:

30. «Երևանտրանս» ՓԲԸ-ի տարածքի բարեկարգում ծրագրով՝ որպես նախորդ տարվա պարտքի մարում նախատեսված 411.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախս չի իրականացվել: 2023 թվականին ծրագրով իրականացվել է 5,790.3 հազար դրամի ծախս:

31. Պետական աջակցությամբ իրականացվող ճանապարհների կառուցում և միջին նորոգում ծրագրով իրականացվել է 2,348,018.8 հազար դրամի ծախս՝ նախատեսված 2,500,000.0 հազար դրամի դիմաց, ինչը 2023 թվականի փաստացի ցուցանիշից 1,068,364.9 հազար դրամով ավել է: Ծրագրի շրջանակներում Աջափնյակ, Ավան, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների Հալաբյան, Լենիգրադյան, Գ. Հասրաթյան, Շիրազի, Դ. Մայրան, Վ. Թամրուշի, Բաբաջանյան, Բաբայան, Նար Դոս, Աթենքի, Ամիրյան, Թումանյան, Մոսկովյան, Մյասնիկյան պողոտա, Անտոն Քոչինյան և Չաքյան, Ծիծեռնակաբերդի խճուղի, Վանթյան, Շերամի, Սեբաստիա փողոցից դեպի Շահումյան 4-րդ՝ մինչև Բաբաջանյան, Արագածի փողոց/Մայիսի 9 փողոցից մինչև Արագածի 93Ա շենք, Թամանցիների, Ղարիբջանյան փողոցներում իրականացվել են 417052 քմ միջին նորոգման աշխատանքներ, ինչպես նաև իրականացվել է դիտահորերի և անձրևորսիչների ապատեղակայման, տեղակայման ու նորերի տեղադրման աշխատանքներ:

32. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր (պատվիրակված լիազորություններ) և Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագիր (պատվիրակված լիազորություններ) ծրագրերով ծախսվել է 211,740.9 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որը 2023 թվականի փաստացի ցուցանիշից 55,756.0 հազար դրամով պակաս է:

33. Վերելակների հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 4,639,081.4 հազար դրամ՝ նախատեսված 4,640,574.0 հազար դրամի դիմաց, ինչը 3,568,154.6 հազար դրամով ավել է 2023 թվականի փաստացի ցուցանիշից: Նշված ծրագրի շրջանակներում 4,617,375.9 հազար դրամով ձեռք են բերվել և տեղադրվել թվով 505 նոր վերելակներ., իսկ 21,705.5 հազար դրամով թվով 4 վարչական շրջաններում իրականացվել են վերելակների ընթացիկ նորոգման, սարքերի փոփոխման, փորձաքննության աշխատանքներ:

34. Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 2,641,750.0 հազար դրամ՝ 2023 թվականի փաստացի ցուցանիշից 70,750.1 հազար դրամով պակաս, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

35. Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություններ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 696,449.4 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որը 68,449.4 հազար դրամով ավել է 2023 թվականի փաստացի ցուցանիշից: Նշված ծրագրով ծախսը ամբողջությամբ ուղղվել է «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

36. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագրով (պատվիրակված լիազորություններ) ծրագրով փաստացի կատարվել է 758,966.0 հազար դրամի ծախս՝ նախատեսված 1,018,752.0 հազար դրամի դիմաց, ինչը 2023 թվականի փաստացի ցուցանիշից 706,232.2 հազար դրամով ավել է: Իրականացվել է գոյություն ունեցող դրենաժային թունելի 930 մ-ով երկարացում, հակակոռոզիոն աշխատանքներ, ինչպես նաև այլ դրենաժային միջոցառումներ:

37. Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքների կառուցում ծրագրով փաստացի ծախս չի իրականացվել, իսկ 2024 թվականին նախատեսված 765,100.0 հազար դրամի չափով «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն»-ի «Աջափնյակ» կայարանի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի համար վճարումը կկատարվի 2025 թվականին:

38. Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքների նորոգում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով 879,380.0 հազար դրամ նախատեսված գումարի շրջանակներում իրականացվել է 845,627.1 հազար դրամի ծախս, կամ կատարողականը կազմել է 96.2%՝ 2023 թվականի փաստացի ցուցանիշից 80,004.4 հազար դրամով պակաս: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել թվով 32 անվազույզեր, թվով 20 անվասայլակի շրջանակներ, թվով 1500 փայտակոճեր, ինչպես նաև Գործարանային կայարանում փոխարինվել են թվով 3 շարժասանդուղքներ:

39. Զբոսաշրջության զարգացում ծրագրով նախատեսված 14,215.0 հազար դրամի դիմաց իրականացվել է 7,258.0 հազար դրամի ծախս, որը 2023 թվականի փաստացի ցուցանիշից 6,391.1 հազար դրամով ավել է: Ծրագրով իրականացվել են սոցիալական

ցանցերում զբոսաշրջային էջերի խթանումը և «Երևան սիթի տուր» զբոսաշրջային տուրի տեքստերի թարգմանումը և ծայնագրումը:

40. Դրոշների տեղադրում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 9,463.2 հազար դրամ՝ նախատեսված 30,464.6 հազար դրամի դիմաց, իսկ 2023 թվականի փաստացի ցուցանիշը կազմել է 11,719.5 հազար դրամ: Նշված ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել և փոխվել են թվով 1200 ՀՀ դրոշներ Երևան քաղաքի փողոցներում, Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներում, մանկապարտեզներում, երաժշտական և արվեստի դպրոցներում, այլ մշակութային կազմակերպություններում, սպորտ-դպրոցներում և շախմատի դպրոցներում, իրականացվել են օտարերկրյա կազմակերպությունների և կառավարությունների ներկայացուցիչների այցերի հետ կապված դրոշակազարդման աշխատանքներ:

41. Աջակցություն համայնքային կազմակերպություններին հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանների պահպանման համար ծրագրով իրականացվել է 247,582.4 հազար դրամի ծախս՝ նախատեսվածի չափով կամ 2023 թվականի փաստացի ցուցանիշից 19,771.8 հազար դրամով պակաս, որից 182,582.4 հազար դրամը որպես սուբսիդիա, իսկ 65,000.0 հազար դրամը՝ աղբատար մեքենայի և էքսկավատորի ձեռքբերման նպատակով, որպես կապիտալ դրամաշնորհ, տրամադրվել է «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ին:

42. Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 646,230.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով կամ 2023 թվականի փաստացի ցուցանիշից 317,515.1 հազար դրամով ավել, ինչն ուղղվել է քաղաքապետարանի ծրագրային ապահովում և ցանցային ղեկավարում իրականացնող «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի սուբսիդավորմանը: Սուբսիդիայի շրջանակներում ընկերությունը ապահովել է նաև քաղաքացիների հետ փոխգործակցության առցանց «Ակտիվ քաղաքացի» (activecitizen.yerevan.am) հարթակը, արտաքին գովազդի կառավարման նոր հարթակը, JIRA հարթակի ներմուծումը, ինչպես նաև միասնական տոմսային համակարգի ստեղծումը:

43. Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին ծրագրով փաստացի ծախսը կազմել է 957,649.8 հազար դրամ՝ նախատեսված 973,011.7 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.4%, ինչը 2023 թվականի փաստացի ցուցանիշից 103,917.8 հազար դրամով ավել է, որի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել կրթական, մշակութային, բժշկական և այլ՝ կազմակերպությունների (ՀՈԱԿ, ՊՈԱԿ, ՓԲԸ, հասարակական կազմակերպություն և այլն):

44. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր ծրագրով փաստացի մուտքերը համայնքի սեփականություն հանդիսացող գույքի, այդ թվում՝ հողի իրացումից մուտքերի մասով կազմել են 4,203,879.8 հազար դրամ՝ նախատեսված 7,481,875.9 հազար դրամի

դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 56.2% կամ 2023 թվականի փաստացի ցուցանիշից 3,635.276.6 հազար դրամով պակաս:

45. Տոնական ձևավորում ծրագրով նախատեսված 91,920.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 79,439.1 հազար դրամ, կամ 86.4%՝ 2023 թվականի փաստացի ցուցանիշից 230,924.6 հազար դրամով պակաս: Ծրագրի շրջանակներում, 17,946.0 դրամն ուղղվել է տոնածառի զարդարանքի, խաղալիքների տոնական լույսերի և պարագաների ձեռքբերմանը, իսկ 61,493.1 հազար դրամը որպես սուբսիդիա տրամադրվել է «Ձևավորում և սպասարկում» ՀՈԱԿ-ին՝ տարբեր միջոցառումների ընթացքում ձևավորումն ապահովելու նպատակով:

46. Հատակագծի նախապատրաստման և կազմման աշխատանքներ ծրագրով կատարվել է 17,340.8 հազար դրամի ծախս՝ նախատեսվածի չափով, որը 3,168.0 հազար դրամով պակաս է 2023 թվականի փաստացի ցուցանիշից: Ծրագրի շրջանակներում, 14,740.8 հազար դրամը որպես սուբսիդիա տրամադրվել է «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ին՝ հատակագծերի կազմման աշխատանքների համար, իսկ երբ «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի գործառույթները փոխանցվել են «Երևաննախագիծ» ՓԲԸ-ին, 2,600.0 հազար դրամ սուբսիդիան հատկացվել է վերջինիս:

47. Ներդրումային ծրագրերի իրականացում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 205,600.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, ինչը 35,600.0 հազար դրամով ավել է 2023 թվականի փաստացի ցուցանիշից, որն էլ որպես սուբսիդիա տրամադրվել է «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ին:

48. Հրատապ լուծում պահանջող ընթացիկ շինարարական աշխատանքների իրականացում ծրագրով ծախսը կազմել է 659,189.8 հազար դրամ 715,096.7 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 92.2%, իսկ 2023 թվականին փաստացի ցուցանիշը կազմել է 833,151.3 հազար դրամ:

49. Աղբահանություն և սանիտարական մաքրում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 795,617.1 հազար դրամ՝ նախատեսված 816,201.7 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 97.5%, որն իր հերթին 348,813.6 հազար դրամով ավել է 2023 թվականի փաստացի ցուցանիշից: Ծրագրի շրջանակներում իրականացվել են կենցաղային աղբի համար նախատեսված կոնտեյներներին տեղադրման համար հարթակների կառուցման աշխատանքներ, ձեռք է բերվել թվով 14 հետևի բարձմամբ աղբատար մեքենաներ, թվով 9 հետևի բարձմամբ աղբատար մեքենաների շարժիչներ, ինչպես նաև տնտեսական ապրանքներ:

50. Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայություններ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 252,413.9 հազար դրամ՝ նախատեսված 252,415.7 հազար դրամի դիմաց, գրեթե 2023 թվականի փաստացի ցուցանիշի չափով, որի շրջանակներում իրականացվել է վարչական շրջաններում կուտակված շուրջ 26000 խմ շինարարական աղբի բարձման, տեղափոխման ծառայություններ:

51. «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի պահպանման ծախսեր ծրագրով նախատեսված 5,872,423.2 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 5,853,165.7 հազար դրամ, կամ 99.7%՝ 2023 թվականի փաստացի ցուցանիշից 861,728.8 հազար դրամով պակաս, որն ուղղվել է Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում 1000000 տոննա աղբի հավաքմանը և տեղափոխմանը: Կատարվել են նաև քաղաքի փողոցների սանիտարական մաքրման (փոշեկուլներով մաքրում, լվացում) և ձյան մաքրման աշխատանքներ:

52.«Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագիր» ծրագրի շրջանակներում մասհանումների գծով մարումների տրամադրում ծրագրով իրականացվել է 13,316.3 հազար դրամի ծախս՝ նախատեսված 14,100.0 հազար դրամի դիմաց, կամ 94.4%՝ 2023 թվականի փաստացի ցուցանիշից 8,672.3 հազար դրամով ավել, որն ուղղվել է ենթավարկային պայմանագրի մասհանման գծով պարտավորությունների կատարմանը:

53.Ջրահեռացման կոմունիկացիոն ցանցերի կառուցում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,262,684.2 հազար դրամ՝ նախատեսված 1,476,729.1 հազար դրամի դիմաց, կամ ընդհանուր կատարողականը կազմել է 85.5%, որը նաև 2023 թվականի փաստացի ծախսից ավել է 271,449.9 հազար դրամով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են վարչական շրջանների կոյուղագծերի ընթացիկ նորոգման աշխատանքներ, Մյասնիկյան պողոտան հատող Նորքի ջրանցքի երկաթյա խողովակաշարի հատվածը նորով փոխարինման և Արտաշատի ջրանցքը սնող թիվ 3 բաժանարարից միացված ջրատարի նորով փոխարինման աշխատանքներ, Վարդանանց և Խանջյան փողոցների հատման մասի ուղեանցում տեղադրվել են ջրահեռացման պոմպեր, ավարտվել են Սիլիկյան գնացող ջրատարից նոր ջրատարի կառուցման և Նոր Դավնա ջրատարի սկզբնամասից մինչև նոր կառուցված ջրատարը կառուցման աշխատանքները (2023 թվականի պայմանագրերի անցումներ), ինչպես նաև ջրահեռացման համակարգերի կառուցման աշխատանքներ են իրականացվել աղյուսակ 7-ում ներկայացված հասցեներում:

Աղյուսակ 7.

Ջրահեռացման կոմունիկացիոն ցանցերի կառուցում ծրագրով իրականացված աշխատանքները՝ ըստ հասցեականության և կատարված արդյունքի

h/h	Կատարված աշխատանքի հասցե
1	Աջափնյակ վարչական շրջանի Նազարբեկյան թաղամասի հհ.1 և 1Ա շենքեր
2	Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոցի հ.5շենքից հ.7 շենք
3	Աջափնյակ վարչական շրջանի Լուկաշինի փողոցի հ.43/2 հ.43/16 շենքի տարածքով մինչև Լուկաշինի փողոց
4	Աջափնյակ վարչական շրջանի Պարսեղովի փողոց

5	Ավան վարչական շրջանի Ալմա-Աթայի փողոցից Ա. Շահինյան 4-րդ նրբանցք
6	Ավան վարչական շրջանի Աղի կոմբինատի այգեգործական տարածք (Բաբաջանյան փող.)
7	Արաբկիր վարչական շրջանի Ղափանցյան փողոցի վերջնամաս
8	Դավթաշեն 2-րդ թաղամասի հ.20 շենքից մինչև հ.16 շենք
9	Դավթաշեն 2-րդ թաղամասի հհ.37ա, 37, 36, 35, 38, 39 շենքեր
10	Էրեբունի վարչական շրջանի Նոր Արեշի 34-րդ փողոցի հեղեղատար համակարգ
11	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ա.Բաբաջանյան փողոց հ.1 շենքից հ.5 շենք
12	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Հաղթանակ թաղամաս 13-րդ փողոց
13	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Հաղթանակ թաղամաս 1-ին փողոցի հ.28 տնից մինչև Հաղթանակ թաղամաս 1-ին փողոցի 3-րդ նրբանցք
14	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Հաղթանակ թաղամաս 1-ին փողոցի հ.49/2-ից մինչև հ.64/1
15	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Անդրանիկի փողոցի հ.121 և հ.123 շենքեր
16	Նոր Նորք վարչական շրջանի Նոր Նորքի 8-րդ գանգված հհ. 28, 29, 34 շենքեր
17	Նոր Նորք վարչական շրջանի Զրվեժ, Բանավան թաղամասի հհ.10, 11, 12 շենքեր
18	Նոր Նորք վարչական շրջանի Լյուքսեմբուրգի փողոցի հ.11 և Լյուքսեմբուրգի 1-ին նրբանցքի հհ.4, 6 շենքեր
19	Շենգավիթ վարչական շրջանի Մանթաշյան փողոց հ. 9 հացեից հ.49
20	Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Շենգավիթ 6-րդ փողոցի վերջնամասից դեպի Արշակունյաց պողոտա
21	Շենգավիթ վարչական շրջանի Նորագավիթ 13-րդ փողոց
22	Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց փողոց հ.47/2 շենքից Ե. Թադևոսյան փողոց
23	Շենգավիթ վարչական շրջանի. Շիրակի փողոց հ.45
24	Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի փողոց հ.21 շենքից հ.29 շենք
25	Շենգավիթ վարչական շրջանի Ն.Շենգավիթ 13-րդ փողոց
26	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Լեփսիուսի 6-րդ փողոց հ.7 շենքից հ.2 և հ.4 շենքերի միջնամաս
27	Նուբարաշենի վարչական շրջանի Նուբարաշեն 9-րդ փողոց հ.4 շենքին հարակից տարածք

28	Նուբարաշենի վարչական շրջանի Նոր Զմյուռնիայի հեղեղատարի կառուցում
29	Նուբարաշենի վարչական շրջանի Նոր Զմյուռնիայի կոյուղագիծի կառուցում
30	Նուբարաշենի վարչական շրջանի 15փ կոյուղագիծի կառուցում
31	Նուբարաշենի վարչական շրջանի 11փ.152 կոյուղագիծի կառուցում
32	Նուբարաշենի վարչական շրջանի 11փ.202 կոյուղագիծի կառուցում
33	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի. Ուլնեցու 1-ին փակուղի 6-րդ շենք
34	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի. Վրթանես Փափազյան փողոցի հ.1 /հ.150 մանկապարտեզ/
35	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի. Նորաշխարհյան փողոցի հ.9 /հ.151 մանկապարտեզ/

54. Գետերի հունների մաքրում ծրագրով փաստացի ծախսը ամբողջությամբ կատարվել է կազմելով 38,683.0 հազար դրամ, 2023 թվականի ցուցանիշի չափով:

55. Շրջակա միջավայրի և օդի աղտոտման դեմ միջոցառումների իրականացում ծրագրով 17,100.0 հազար դրամի դիմաց իրականացվել է 14,098.4 հազար դրամի ծախս, կամ կատարողականը կազմել է 82.4%, որը իր հերթին 2023 թվականի փաստացի ցուցանիշից 1,130.4 հազար դրամով ավել է: Ծրագրի շրջանակներում 11,374.0 հազար դրամը որպես դրամաշնորհ տրամադրվել է «Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ-ին՝ Նուբարաշենի բիոգազի հավաքման և այրման կայանի սպասարկման նպատակով, իսկ 2,724.4 հազար դրամն ուղղվել է օդի որակի թվով 5 մոնիթորինգի սարքավորումների սպասարկմանը:

56. Կանաչ տարածքների հիմնում և պահպանում ծրագրով նախատեսվածն ամբողջությամբ կատարվել է կազմելով 4,409,026.3 հազար դրամ՝ 2023 թվականի փաստացի իրականացված ծախսից 214,474.3 հազար դրամով ավելի, որից մասնավորապես, 43,315.2 հազար դրամն ուղղվել է «Հրազդանի կիրճ» պլանավորվող պետական արգելավայրի նախանշված տարածքի ելակետային ուսումնասիրության, կենսաբազմազանության գույքագրման և թեմատիկ քարտեզագրման իրականացմանը իսկ 4,365,711.1 հազար դրամը տրամադրվել է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ին որպես սուբսիդիա, որի շրջանակներում կանաչ տարածքները ընդլայնվել են 12.8 հա-ով, արդիականացվել և վերականգնվել է 31068.8 գծմ ոռոգման ջրագիծ, փոխարինվել և տնկվել է թվով 4539 նոր ծառ, 58,276 թուփ և 344939 ծաղիկ, ձեռք է բերվել թվով 2 հատուկ տեխնիկա (տրակտոր)՝ սրսկիչ և կոճղահան կցորդիչներով:

57. Ախտահանման և միջատազերծման ծառայություններ (դեռատիզացիա) ծրագրով փաստացի ծախսը կազմել է 24,515.1 հազար դրամ՝ նախատեսված 25,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.1%, որը 2023 թվականի փաստացի ցուցանիշից 1,182.1 հազար դրամով պակաս է: Նշված ծրագրի շրջանակներում վարչական

շրջանների տարբեր հատվածներում (աղբի կոնտեյներների հարակից տարածքներ, մանկապարտեզներ, առանձնակի դեպքերում՝ բազմաբնակարան շենքեր) իրականացվել են դեռատիզացիոն աշխատանքներ:

58. Հասարակական զուգարանների պահպանում և վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 8,090.6 հազար դրամ՝ նախատեսված 9,071.5 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 89.2%, 2023 թվականի փաստացի իրականացված ծախսից 1,900.6 հազար դրամով ավելի, որի շրջանակներում Շենգավիթ և Էրեբունի վարչական շրջաններում իրականացվել են թվով 4 հասարակական զուգարանների պահպանման և մաքրման աշխատանքներ:

59. Թափառող կենդանիների վնասազերծում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 275,937.2 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, ինչը 19,034.9 հազար դրամով պակաս է 2023 թվականի փաստացի ցուցանիշից: Ծրագրի շրջանակներում սուբսիդիա է տրամադրվել «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ին: 2024թ-ին կենտրոն է տեղափոխվել թվով 5036 կենդանիներ, որոնցից 3474-ը ստերջացվել է, վերապատվաստվել՝ 784-ը, քնեցվել՝ 778-ը:

60. Երևանյան լճի և Հրազդան գետի բնապահպանական պաշտպանում և մաքրում ծրագրով նախատեսված 188,366.7 հազար դրամի դիմաց իրականացվել է 178,194.3 հազար դրամի ծախս, կատարողականը կազմել է 94.6%, որը իր հերթին 2023 թվականի փաստացի ցուցանիշից 174,197.3 հազար դրամով ավել է: Նշված ծրագրի շրջանակներում իրականացվել են Հրազդան գետի վրա թվով 2 աղբաորսիչ հարմարանքների տեղադրման աշխատանքներ՝ 114,735.3 հազար դրամի չափով, ինչպես նաև Հրազդանի կիրճում իրականացվել են 9900 խմ ծավալով աղբի, եղեգների հավաքման և տեղափոխման ծառայություններ՝ 63,459.0 հազար դրամի չափով:

61. Բնապահպանական կայանների կառուցում ծրագրով նախատեսված 254,302.7 հազար դրամի դիմաց փաստացի իրականացվել է 232,198.8 հազար դրամի ծախս՝ 2023 թվականի փաստացի ցուցանիշից 225,202.8 հազար դրամով ավել: Ծրագրի շրջանակներում ավարտվել են 2023 թվականին մեկնարկած՝ Գետառ գետի հունի վրա Վերին Շենգավիթ 1-ին և 2-րդ փողոցների 2-րդ փակուղիների միջնամասում կեղտաջրերի մաքրման կայանի կառուցման աշխատանքները:

62. Շրջակա միջավայրի պաշտպանության ենթակառուցվածքների զարգացում ծրագրով նախատեսված 79,100.9 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 12,940.3 հազար դրամ: Ծրագրի շրջանակներում դեռևս 2022 թվականից մեկնարկած արտադրական մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները շարունակվել են նաև 2024 թվականի ընթացքում, իսկ պայմանագրի անցման շրջանակներում աշխատանքները կշարունակվեն նաև 2025 թվականին: 2023 թվականին ծրագրով իրականացվել է 173,110.2 հազար դրամի ծախս:

63. «Երևան, Վարչավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարմանն առնչվող ընդհանուր մարտահրավերների

շուրջ» աշխատանքների իրականացում և «Երևան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարմանն առնչվող ընդհանուր մարտահրավերների շուրջ» դրամաշնորհային ծրագրի իրականացում ծրագրերով ծախսը կազմում է 900,909.1 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որը իր հերթին 2023 թվականի փաստացի ցուցանիշից 490,743.5 հազար դրամով ավել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Երևանի քաղաքային վտանգավոր թափոնների 2024-2028թթ. նախագծի, հաջորդիվ հնարավոր նախագծերի վերաբերյալ հաշվետվության մշակումը, դպրոցների, նորարական դրամաշնորհառուների, վերամշակողների մասնակցությամբ ծրագրի փակման միջոցառումը, 2024թ. հունիսի 30-ի դրությամբ ավարտված ծրագրի գործողությունների ամփոփումը, աուդիտը և փակումը:

64. Ինքնակամ կառույցների քանդում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 122,096.2 հազար դրամ՝ նախատեսված 146,206.3 հազար դրամի դիմաց, ընդհանուր կատարողականը կազմել է 83.5%, ինչը 2023 թվականի փաստացի ծախսից ավել է 65,678.8 հազար դրամով:

65. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների կողմից վարձակալված բնակարանների փոխհատուցում կազմել է 6,204.0 հազար դրամ՝ նախատեսված 7,920.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 78.3%, որն ուղղվել է Երևան քաղաքի Արզումանյան փողոցի վթարային շենքի վերաբնակեցված բնակիչների թվով 3 ընտանիքների համար բնակարանների վարձակալությանը: 2023 թվականին փաստացի ծախսը կազմել է 5,324.0 հազար դրամ:

66. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերում ծրագրով նախատեսված 397,487.2 հազար դրամի ծախսը կատարվել է ամբողջությամբ՝ 2023 թվականի փաստացի ցուցանիշից 345,297.2 հազար դրամով ավելի, որի շրջանակներում իրականացվել է Արցախի պողոտա 4-րդ նրբանցք 10 և 10/1 շենքերի բնակարանների գնման վկայագիր ստացած թվով 25 ընտանիքների կողմից ձեռքբերված բնակարանների դիմաց փոխհատուցումը:

67. Վթարային շենքերի վերաբնակեցման ծրագրի իրացման միջոցառումներ ծրագրով նախատեսված 179,687.5 հազար դրամի ծախսը կատարվել է ամբողջությամբ, որի շրջանակում իրականացվել է հանրության գերակա շահ ճանաչված՝ Երևան քաղաքի Արզումանյան փ. 10 ու 17 շենքերի և հարակից տարածքներում առկա 76 միավոր գույքից 33 միավորի գույքի օտարման, կադաստրային ու նոտարական ձևակերպումներ: Ծրագրով 2023 թվականին ֆինանսական միջոցներ նախատեսված չեն եղել:

68. Շենքերի գեղարվեստական լուսավորում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 13,886.5 հազար դրամ՝ նախատեսված 14,721.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 94.3%, որն ուղղվել է Էրեբունի վարչական շրջանի Կայարանամերձ հրապարակի և Սասունցի Դավթի արձանի և Շենգավիթ վարչական

շրջանում Գ.Նժդեհի անվան հրապարակի 17, Բագրատունյաց 17,15, Շիրակի 13, Արշակունյաց փողոց 53, 53ա, Գ.Նժդեհի 40 շենքերի գեղարվեստական լուսավորմանը: 2023 թվականի համեմատ ծրագիրը կատարվել է 79,433.2 հազար դրամով պակաս:

69. Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ ծրագրով նախատեսված 1,906,780.2 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 1,906,297.2 հազար դրամ՝ 2023 թվականի փաստացի ծախսից 281,568.2 հազար դրամով ավել, որից 1,886,780.2 հազար դրամ գումարը՝ որպես սուբսիդիա հատկացվել է «Երքադլույս» ՓԲԸ-ի պահպանման ծախսերի համար՝ աշխատավարձ, էլեկտրաէներգիա և ընթացիկ նորոգման աշխատանքներ, իսկ 11,572.8 հազար դրամի սահմաններում իրականացվել է Երևան քաղաքի վարչական շրջաններում, մասնավորապես Աջափնյակ վարչական շրջանի 4 փողոցներում, Արաբկիր վարչական շրջանի 2 տարածքներում, Նուբարաշեն վարչական շրջանի 11 փողոցներում, Շենգավիթ վարչական շրջանի 5 փողոցներում ընթացիկ նորոգման, ինչպես նաև Էրեբունի վարչական շրջանի կայարանամերձ հրապարակի և Սասունցի Դավթի արձանի գեղարվեստական լուսավորման կապիտալ բնույթի աշխատանքներ՝ «Երքադլույս» ՓԲԸ-ի կողմից:

70. «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության ծրագիր» դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ), «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության ծրագիր» (պատվիրակված լիազորություններ) և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ) ծրագրերի փաստացի ծախսը կազմել է 281,737.7 հազար դրամ՝ նախատեսված 718,261.4 հազար դրամի դիմաց, կամ 39.2%, ինչը 177,863.9 հազար դրամով ավել է 2023 թվականի փաստացի ցուցանիշից: Ծրագրի շրջանակներում կատարվել են մասնակի աշխատանքներ Երևան քաղաքի Մյասնիկյան, Աճառյան, Թումանյան, Հանրապետություն, Վարդանանց և Խորենացի փողոցներում, մասնավորապես իրականացվել է՝ հենասյուների փոխարինում 119 հատ, առկա էներգատար լուսատուները փոխարինվել են արդիական ԼԵԴ լուսատուներով 119 հատ, բարձակների փոխարինում 328 հատ, առաջնային և երկրորդային խրամուղիների քանդում 5191 մետր, խրամուղիներում ստորգետնյա կոմունիկացիաների համար նախատեսված խողովակների անցակացում 26291 մետր, ստորգետնյա խողովակաշարերում էլ.սնուցման մալուխների անցակացում 1522 մետր:

71. Արտաքին լուսավորության ցանցի արդիականացում ծրագրով նախատեսվել է 103,492.0 հազար դրամ գումար, որի փաստացի ծախսը կազմել է 81,274.4 հազար դրամ կամ 78.5%, որով կատարվել են խորհրդատվական ծառայությունների վճարումներ: Ծրագրի շրջանակներում մարվել է նաև նախորդ տարվա պայմանագրի անցումը կապված՝ Ազատության հրապարակի արտաքին լուսավորության ցանցի բարելավման,

Հանրապետության հրապարակի արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության և հեղինակային հսկողության հետ: Ծրագիրը 2023 թվականի համեմատ կատարվել է **4,876.1** հազար դրամով ավել:

72. Շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 40,342.7 հազար դրամ՝ նախատեսված 42,742.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 94.4%, որն ուղղվել է թվով 23 մանկապարտեզի, թվով 6 պոլիկլինիկա, թվով 7 բազմաբնակարան շենքի, թվով 2 դպրոց, թվով 3 մշակութային հաստատության, թվով 1 էստակադայի սեյսմիկ հետազոտման և ինքնակամ կառույցների օրինականացման ընթացքում շինությունների հետազոտման աշխատանքներին և սողանքի առաջացման ինժեներատեխնիկական ուսումնասիրություններին, ինչպես նաև իրականացվել են նախորդ տարվա պայմանագրերի անցումների վճարումներ: Ծրագրի փաստացի ծախսը 2023 թվականի համեմատ ավել է 36,045.5 հազար դրամով:

73. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 202,206.0 հազար դրամ՝ նախատեսված 209,888.2 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 96.3%, որի սահմաններում մայրաքաղաքի 9 վարչական շրջաններում նորոգվել են թվով 274 բազմաբնակարան շենքերի շուրջ 54766.0քմ հարթ տանիք: Ծրագիրը 2023 թվականի համեմատ կատարվել է 38.4 %-ով պակաս:

74. Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում ծրագրով նախատեսված 496,549.4 հազար դրամի դիմաց 444,727.0 հազար դրամով, ինչը 105,611.4 հազար դրամով ավել է 2023 թվականի փաստացի ցուցանիշից: 347,788.9 հազար դրամի չափով՝ Արաբկիր, Էրեբունի և Կենտրոն վարչական շրջաններում հիմնանորոգվել կամ մասնակի նորոգվել են թվով 22 թեք տանիք, մասնավորապես՝ Կոմիտաս 44, Կոմիտաս 54, Գ.Մահարի փող. հ.39ա, Ավանեսովի փող. հ.14, Մուրացան 192, Էրեբունի փող. հ.3 շենքեր, Տիգրան Մեծ 36, Պարոնյան 9, Սայաթ Նովա 13, Վարդանանց 16/1, Քաջազունի 8, Դեմիրճյան 40, Հերացի 10, Տերյան 71, Տիգրան Մեծ 36Բ, Տիգրան Մեծ 37, Տիգրան Մեծ 41, Խանջյան 31, Մաշտոց 6, Մաշտոց 7, Մաշտոց 16, Մաշտոց 27 շենքերի տանիքները, ինչպես նաև վարչական շրջաններում ձեռք է բերվել թեք տանիքների նորոգման համար շինանյութ՝ 96,938.1 հազար դրամի չափով:

75. Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 3,571,567.3 հազար դրամ նախատեսված 4,162,452.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 85.8%, ինչը 1,120,623.5 հազար դրամով պակաս է 2023 թվականի կատարողականից: Ծրագրի 34,499.3 հազար դրամի շրջանակներում համատիրություն-վարչական շրջան համագործակցության շրջանակներում իրականացվել են բակային տարածքների պահպանման ընթացիկ աշխատանքներ, ինչպես նաև 166,805.4 հազար դրամն ուղղվել է բակերի ընթացիկ նորոգմանը, նստարանների, զրուցարանների և խաղերի ընթացիկ

նորոգման, ներկման աշխատանքներին, 3,192,091.6 հազար դրամը բակային տարածքներում խաղահրապարակների և միջբակային աստիճանների կառուցմանը և հիմնանորոգմանը, 178,170.9 հազար դրամով ձեռք բերվել և մանկական խաղահրապարակներում և բակային տարածքներում տեղադրվել են ռետինե հատակներ, արհեստական խոտածածկեր, ճոճանակներ, սահարաններ, նստարաններ և զրուցարաններ:

Ընթացիկ աշխատանքներ իրականացվել են շուրջ 132 հասցեներում.

Աղյուսակ 8

Երևան քաղաքի վարչական շրջաններում՝ բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում ծրագրով իրականացված ընթացիկ աշխատանքները՝ ըստ հասցեականության

ԱԶԱՓԼՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝	<ol style="list-style-type: none"> 1. Արզումանյան 72, 2. Արզումանյան 42, 3. Արզումանյան 132, 4. Արզումանյան 282 5. Բաշինջաղյան 1 նրբ. 152, 6. Նազարբեկյան 422, 432, 7. Նազարբեկյան 72, 8. Բուենոս Այրեսի այգի, 9. Մարգարյան 1-ին նրբ 82, 10. Շինարարների 14/1, 11. Շինարարների 24, 12. Բաշինջաղյան 1882, 13. Շինարարների 32, 52, 14. Շինարարների 42, 15. Շինարարների 112, 16. Շինարարների 15/12, 17. Հալաբյան 342, 18. Էստոնական 12/1, 19. Մարգարյան 2 նրբ 82 հարև., 20. Լենինգրադյան 82,102, 21. Լենինգրադյան 242,302, 22. Լենինգրադյան 322, 23. Լենինգրադյան 182, 24. Լենինգրադյան 34, 42, 25. Լենինգրադյան 362, 382,
---	--

	<p>26. Նորաշեն 52, 122,</p> <p>27. Նորաշեն 16թաղ 2շրթա նստարանների տեղադրում:</p>
ԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ	<p>1. Աճառյան փող. 26/2;</p> <p>2. Բաբաջանյան 3;</p> <p>3. Ավան-Առինջ 2մկշ. 2/4շ;</p> <p>4. Նարեկացի թաղ. 38շ.;</p> <p>5. Դուրյան թաղ. 37շ.;</p>
ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ	<p>1. Տիգրան Մեծ 53</p> <p>2. Նալբանդյան 47</p> <p>3. Պուշկին 43</p> <p>4. Բոլյուսով 165</p>
ՄԱԼԱԹԻԱ- ՍԵՐԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ	<p>1. Բաբաջանյան փ. Հ. 85 շենքի ետնամասի այգի</p> <p>2. Րաֆֆու փ. հ.83,87,89,91 շենքերի միացյալ այգի</p> <p>3. Անդրանիկի փ. հ.56 շ. բակ</p> <p>4. Անդրանիկի փ. հհ. 146, 148 շենքերի բակ</p> <p>5. Անդրանիկի փ. հ. 140 շ. բակ</p> <p>6. Րաֆֆու փ. հ. 81 շ. բակ</p> <p>7. Անդրանիկի փ. հ.104 շ. բակ</p> <p>8. Անդրանիկի փ. հ.88 շ. բակ</p> <p>9. Անդրանիկի փ. հ.92 շ. բակ</p> <p>10. Մայրության այգի</p> <p>11. Օհանովի փ. հ.7 շ. բակ</p> <p>12. Օհանովի փ. հհ. 30,32,34,36,38,40 շ. այգի</p> <p>13. Անդրանիկի փ. հ.13 շ. բակ</p> <p>14. Տիչինայի փ. հ.34 շ. բակ</p> <p>15. Լենինգրադյան փ. հ. 31/8 շ. բակ</p> <p>16. Մալաթիա Պուրակ</p> <p>17. Կուրդինյան փ. հհ. 19, 21 շ. հարակից այգի</p> <p>18. Շերամի փ. հ. 103 շ. բակ</p> <p>19. Շերամի փ. հ. 53 շ. բակ</p> <p>20. Անդրանիկի փ. հ. 24, 26, 28, 30 շ. բակ</p> <p>21. Անդրանիկի փ. հ. 42 շ. բակ</p> <p>22. Սվաճյան 40 շ. բակ</p> <p>23. Սուրբ Երրորդություն եկեղեցու հարակից հատված</p> <p>24. Միքայելյան փ. հ. 78 շ. բակ</p> <p>25. Միքայելյան փ. հ. 70շ. բակ</p>

26. Սեբաստիա փ. հ. 82 շ. բակ
27. Անդրանիկի փ. հ. 77 շ. բակ
28. Սիրո և հատավի այգի
29. Իտալական այգի
30. Բ-2 թաղ. հ. 121 շ. բակ
31. Բ-2 թաղ. հ. 131 շ. բակ
32. Բաբաջանյան փ. հհ. 63,65,67,69,71 շ. բակ
33. Բաբաջանյան փ. հ. 29/1 շ. ետնամասի այգի
34. Անդրանիկի փ. հ. 114 շ.բակ
35. Շերամի փ. հ. 41 շ.բակ
36. Սվաճյան փ. հ. 26 շ. բակի ֆուտբոլի դաշտ
37. Անդրանիկի փ. հհ. 49,51 շ. ետնամաս
38. Արարատյան 1-ին զանգված 15շ
39. Կուրդինյան փ. հ. 1 շ. բակ
40. Կուրդինյան 2-րդ նրբանցք 13 շ. բակ
41. Իսակովի փ. հ. 50/3 շ. բակ և ետնամաս
42. Յուրի Բախշյանի անվան այգի
43. Իսակովի փ. հ. 50/1 շ.բակ
44. Իսակովի փ. հ. 52/1 շ.բակ
45. Իսակովի փ. հ. 52/5 շ.բակ
46. Շերամի փ. հ. 95 շ.բակ
47. Շերամի փ. հ. 57 շ.բակ
48. Օհանով փ. հ. 2 շ.բակ
49. Օհանով փ. հ. 4 շ.բակ
50. Օհանով փ. հ. 6 շ.բակ
51. Անդրանիկի փ. հհ. 32,34 շ.բակ
52. Օհանով փ. հ. 10 շ. բակ
53. Սվաճյան 44 շ.բակ
54. Միքայելյան փ. հ. 74 շ.բակ
55. Իսակովի փ. հ. 30 շ.բակժ
56. Բաբաջանյան փ. հ. 109 շ.բակ
57. Բաբաջանյան փ. հ. 157,163,167 շ.բակ
58. Բ-2 թաղ. հհ. 21,24 շ.բակ
59. Անդրանիկի փ. հ. 137 շ.բակ
60. Իսակովի փ. 38/1 շ.բակ
61. Բաբաջանյան փ. հ.47 շ.բակ
62. Անդրանիկի փ. 33,35,37 շ.բակ

ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ	<ol style="list-style-type: none"> 1. Նանսենի 2շ. մինի ֆուտբոլի դաշտ 2. Մոլդովական 46/1 շ. մինի ֆուտբոլի դաշտ 3. 106 դպրոցին հարակից նանսենի նրբ. 4 տարածքներում մինի ֆուտբոլի դաշտ 4. Գայի 9շ. խաղահրապարակներում ռետինե ծածկույթ 5. 8 զանգվածի շրջ. 3 խաղահրապարակներում ռետինե ծածկույթ, 6. Շոպրոնի 4 խաղահրապարակներում ռետինե ծածկույթ, 7. Բակունցի 2նրբ. 1շ. խաղահրապարակներում ռետինե ծածկույթ 8. Բաղյան 1 նրբ. 5շ. խաղահրապարակներում ռետինե ծածկույթ 9. Գյուլիքեվիյան նրբ.4 բակ; 10. Ստեփանյան 13 բակ; 11. Մոլդովական 30/2 բակ; 12. Ջրվեժ Մայակ 30 բակ; 13. Գալշոյան 12 բակ; 14. Մոլդովական 1 բակ:
ՆՈՐՔ ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ	<ol style="list-style-type: none"> 1. Նորք-Մարաշ վ/շ "Օլիմպոս" կրթահամալիրի հարակից տարածքի ֆուտբոլի դաշտի ռետինե միաձույլ հատակիների պատրաստման աշխատ.
ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ	<ol style="list-style-type: none"> 1. Արարտյան 1-ին ներբանցք 2. Արշակունյաց 54/2 3. Բագրատունյանց 49 շ. 4. Եղիշե Թադևոսյան 17շ. 5. Եղիշե Թադևոսյան 2շ. 6. Եղիշե Թադևոսյան Շենգավիթ մետրոյի հարակից տարածք 7. Մանթաշյան 10ա շ. 8. Մանթաշյան 12 շ. 9. Եղիշե Թադևոսյան 15 և 17շ 10. Արագածի 93 հարակից տարածք 11. Բագրատունյանց 19-21 12. Բագրատունյանց 22 13. Արարտյան փ 14. Շարուրի 19 և 21 15. Եղբայրության փ. 16. Շարուրի 25 17. Շարուրի 19 18. Շարուրի 24 19 Շարուրի 27-31

Կապիտալ հիմնանորոգման և կառուցման մասով աշխատանքներն իրականացնել են շուրջ 112 հասցեներում.

Աղյուսակ 9

Երևան քաղաքի վարչական շրջաններում՝ բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում ծրագրով իրականացված կապիտալ բնույթի աշխատանքները՝ ըստ հասցեականության

ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ	ՀԱՍՑԵՆԵՐ	2024Թ. ԱՎԱՐՏՎԱԾ	2025Թ. ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ
ԱԶԱՓՆՅԱԿ	1. Լուկաշինի 2,3 շենքերի բակային տարածքի հիմնանորոգում	✓	
	2. Բաշինջաղյան 1 փողոց 7 շենք	✓	
	3. Ֆուչիկի 2 թղ նրբանցք 2 թղ շենքի բակի հիմնանորոգման աշխատանքներ	✓	
	4. Հալաբյան 15 շենքի բակի հիմնանորոգման աշխատանքներ	✓	
	5. Նազարբեկյան 1ա 1բ 2,4,5շենքերի բակային տարածքների հիմնանորոգման աշխատանքներ	✓	
	6. Հալաբյան 45 շենքի բակ	✓	
	7. Թիվ 156 դպրոցի ֆուտբոլի դաշտ		✓
ԱՎԱՆ	1. Հովհաննիսյան 24/2-28 բակային տարածք	✓	
	2. Սայաթ-Նովա 1/3 բակային տարածք	✓	
	3. Բաբաջանյան 18/13 բակային տարածք	✓	
	4. Ռուբինյանց 27/4Ա բակային տարածք	✓	
	5. Ավան-Առինջ 2-րդ մ/շ 2/8-2/9 բակային տարածք:	✓	
ԱՐԱՐԿԻՐ	1. Հր. Քոչար 27 և 27 Ա	✓	

	2. Կոմիտաս 16	✓	
	3. Գյուլբենկյան 39ա	✓	
	4. Քանաքեռ ՀԷԿ 8 ֆուտբոլի դաշտ	✓	
	5. Վաղարշյան 1 և 3	✓	
	6. Կոմիտաս 22	✓	
	7. Մամիկոնյանց 62	✓	
	8. Համբարձումյան 7 և 9	✓	
	9. Կոմիտասի պ. 44շ.	✓	
	ԴԱՎԹԱՇԵՆ	1. Դավթաշեն 3-րդ թաղամասի 9 շենքի հետնամասի բարեկարգում	✓
2. Դավթաշեն 4-րդ թաղ. 45.46.47 շենքերի բակերի բարեկարգման աշխատանքներ		✓	
3. Դավթաշեն 3-րդ թաղ. 14-15 շենքերի բակում ֆուտբոլի դաշտի վերակառուցում		✓	
4. Դավթաշեն 2-րդ թաղամասի 19-20 շենքի հետնամասի բարեկարգում			✓
5. Դավթաշեն 2-րդ թաղամասի 8-12 շենքերի բակերի բարեկարգում			✓
6. Դավթաշեն 4-րդ թաղ. 3-4 շենքերի բակում ֆուտբոլի դաշտի վերակառուցում		✓	
7. Դավթաշեն 1-ին թամաս 9 շենքի հետնամասի և 10, 10Ա շենքերի բակերում բարեկարգում		✓	
ԷՐԵՐՈՒՆԻ	1. Աթոյան անցուղի հ.9 շենք	✓	
	2. Աթոյան անցուղի հ.10 շենք,	✓	
	3. Աթոյան Անցուղի 15 շենք,	✓	

	4. Արցախի պող հ.14 շենք,	✓		
	5. Գուրգեն Մահարու փողոց հ.127 շենք	✓		
	6. Ավանեսովի փողոց հ.2/1 շենքի դիմաց,	✓		
	7. Նուբարաշենի խճուղի հ.5/5 շենք	✓		
	8. Խաղաղ Դոնի 31շենքի 1-ին, 2-րդ և 11-րդ մուտքերի բակային տարածքներ	✓		
	9. Սարի Թաղի 7-րդ փողոց հ.66 մանկապարտեզի ետնամասում գտնվող այգի,	✓		
	10. Ավանեսովի փողոց հ. 2/1 շենքին հարակից բակ,	✓		
	11. Նոր Արեշի 35 փողոց հ. 127 շենք,	✓		
	12. Նուբարաշենի խճուղի հ. 5/3 շենքի բակային տարածք	✓		
	ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝ Բակային տարածքներ.	1. Մաշտոցի 40 և 40 Ա	✓	
		2. Վարդանանց 10		✓
	Ասփիճաններ բակային տարածքներում՝	1. Այգեստան 11-ից դեպի Սարալանջ	✓	
2. Պարոնյան -Կոնդ հասցեի		✓		
3. Աբովյան 26ա		✓		

	4. Չարենցի անցումի ձախ և աջ բակային աստիճաններ	✓	
	5. Պուշկին-Թումանյան 35-Ա		✓
	6. Կիլիկիա 1	✓	
	7. Նոտարից Մոսկովյան 28 մասնակի	✓	
	8. Դեմիրճյան 27-29-31	✓	
	9. Այգեստան 11-ից 41 շենք	✓	
	10. Արամի փողոցից Սարյան	✓	
	11. Սարյան 24 Ա և Բ բակային տարածք	✓	
	12. Կոնդ- Լեո հասցեի բակային տարածք		✓
ՄԱԼԱԹԻԱ-ՍԵՐԱՍԻԱ	1. Անդրանիկի փ. հ 76 շենքի հարակից տարածք	✓	
	2. Բաբաջանյան փ. հ 43 շենքին հարող տարածք	✓	
	3. Շերամի փ. հ 115 շենքի դիմացի տարածք		✓
	4. Օհանովի փ. հ 6 շենքի դիմացի տարածք		✓
	5. Շերամի փ. հհ 15, 17 շենքերի բակում գտնվող տիպային ֆուտբոլի դաշտ	✓	
	6. Բաբաջանյան 92-ից դեպի Բաբաջանյան 312 տանող անցուղու աստիճաններ		✓

	7. Անդրանիկի 103 ² բակի տիպային ֆուտբոլի դաշտ	✓	
	8. Բաբաջանյան 115, 117 ²² բակերի տիպային ֆուտբոլի դաշտ		✓
	9. Անդրանիկի 104 ² բակի ֆուտբոլի դաշտ		✓
	10. Բաբաջանյան 91, 93 ²² բակի տիպային ֆուտբոլի դաշտ		✓
	11. Մխիթար Սեբաստացի կրթահամալիր դպրոցի և Բաբաջանյան փ.32 շենքի միջև գտնվող տարածքում ֆուտբոլի դաշտ		✓
	12. Անդրանիկի 43 շենքի բակում գտնվող տիպային ֆուտբոլի դաշտ	✓	
ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝ Բակային տարածքներ.	1. 7-րդ զանգ. 45, 46, 47 շենքերի հարակից տարածք	✓	
	2. 7-րդ զանգ.հ.22 պոլիկլինիկային հարակից տարածքում ֆուտբոլի դաշտ	✓	
	3. Շոպրոնի 4-րդ նրբ.4 շենքի դիմաց խաղահրապարակ	✓	
	4. Գյուլիքեվիսյան 35 շենքի հարակից տարածքում խաղահրապարակ		✓

	5. Ջրվեժ բանավան 5 շենքի հարակից տարածք	✓	
	6. Նոր Նորք վարչական շրջանի Մառի նրբ.6 շենքի հարակից տարածք	✓	
	7. Վիլնյուսի 107 շենքի բակ	✓	
	8. հ.106 դպրոցի հարակից մարզահրապարակների հիմնանորոգում	✓	
	9. Ջրվեժ Բանավան 15 շենքի հարակից տարածք		✓
	10. Մառի նրբ. 6 շենքի հարակից տարածք	✓	
	11. Թոթովենց 1 շենքի հարակից տարածք	✓	
<i>Աստիճաններ բակային տարածքներում՝</i>	1. Մոլդովական 24 շենքի հարակից աստիճանների հիմնանորոգում	✓	
	2. Դ.Մալյան նրբ.11 շենքից դեպի Մոլդովական 25/4 շենք տանող աստիճաններ	✓	
	3. հ.120 մմ հարակից աստիճաններ:	✓	
ՆՈՐՔ ՄԱՐԱՇ	1. Նորք-Մարաշ վ/շ Նորքի 11-րդ փողոցի թիվ 157 դպրոցի հարակից տարածքում մինի ֆուտբոլի դաշտի կառուցման աշխ	✓	
ՆՈՒԲԱՐԱՇԵՆ	1. Նուբարաշեն 11փ. 3 շենքի բակ		✓
	2. Նուբարաշեն 11փ. 19 շենք բակ	✓	

	3. Նուբարաշեն 1-ին փ. վերջնամասում, զորամասի պատին կից ֆուտբոլի դաշտ	✓	
ՇԵՆՉԱՎԻԹ	1. Աէրացիա 1 շենքի բակ	✓	
	2. Նորագավիթ 1-ին փող.,1-ին փակուղի	✓	
	3. Արշակունյաց 30,32 շենքերի միացյալ բակ	✓	
	4. Եղ. Թադևոսյան 17, 19 շենքերի միացյալ բակ	✓	
	5. Գ.Նժդեհի 1,3 և Մանանդյան 17 շենքեր	✓	
	6. Նորագավիթ 13-րդ փողոցի բակի բարեկարգում	✓	
	7. Արտաշիսյան 88, 88ա շենքերի միացյալ բակ	✓	
	8. Մանթաշյան փող. թիվ 4 շենքի բակ	✓	
	9. Աէրացիա թաղամաս թիվ 5 շենքի բակ	✓	
	10. Բագրատունյաց փող. թիվ 15 շենքի բակ	✓	
	11. Չեխովի փող. թիվ 15 շենքի բակ	✓	
	12. Մանանդյան փող. թիվ 14, Նիզամի փող. թիվ 13, Եղբայրության փող. թի 3, 3ա շենքերի միացյալ բակ	✓	

	13. Եղբայրության փող. թիվ 19, Հայկ Հովսեփյան թիվ 11, Մանադյան փող.թիվ 32 շենքերի միացյալ բակ	✓	
	14. Շարուրի թիվ 27 և 29 շենքերի բակ, ֆուտբոլի դաշտ	✓	
	15. Շարուրի թիվ 19 և 21 շենքերի բակ, ֆուտբոլի դաշտ	✓	
	16. Եղ. Թադևոսյան նրբ. 17 /1 շենքի բակի բարեկարգում	✓	
	17. Արտաշիսյան փող. 45/20,45/21 և Բագրատունյաց փող. 8 շենքի միացյալ բակի բարեկարգում	✓	
	18. Արտաշիսյան փող. 45/20,45/21 և Բագրատունյաց փող. 8 շենքի միացյալ բակի բարեկարգում՝ 2-րդ փուլ		✓
	19. Աէրացիա 2 բակի հիմնանորոգում	✓	
	20. Շահամիրյանների փող.1,2,3,1/1,1/2 շենքերի միացյալ բակ	✓	
	21. Ս.Տարոնցու նրբ. 11 շենքի բակի բարեկարգման աշխատանքներ	✓	
	ՔԱՆԱՔԵՌ-ՉԵՅԹՈՒՆ	1. Ահարոնյան 16 շ հարակից տարածքի ֆուտբոլի դաշտ	✓

	2. Դրոյի 26 շենքի հարակից տարածքի ֆուտբոլի դաշտ	✓	
	3. Գոգոլի 66 հասցեի հարակից տարածքի ֆուտբոլի դաշտ	✓	
	4. Սարկավազի 131 շենքի հարակից տարածքի ֆուտբոլի դաշտ	✓	
	5. Գոգոլի 7	✓	
	6. Քանաքեռի 6-րդ փողոց (Սուրբ Աստվածածին եկեղեցու մոտ)	✓	
	7. Ուլնեցու փ. 3-րդ փակ. 4-րդ շ. Հարակից տարածք	✓	
	ԸՆԴԱՄԵՆԸ		95

76. Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ ծրագրով 2023 թվականի համեմատ կատարվել է 338,416.8 հազար դրամով պակաս փաստացի ծախս և կազմել է 344,674.5 հազար դրամ՝ նախատեսված 491,401.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 70.1%, որի շրջանակներում վերանորոգվել կամ մասնակի նորոգվել են բազմաբնակարան շենքերի թվով 229 շքամուտքեր, տեղադրվել են դռներ, փոխվել են լուսամուտները: Ծրագրի շրջանակում աշխատանքների կազմակերպման արդյունավետությունն ապահովելու նպատակով 28,500.0 հազար դրամի սահմաններում մուտքերի նորոգման աշխատանքներ են իրականացվել նաև համատիրություն-վարչական շրջան համագործակցության շրջանակներում:

77. Վթարային պատշգամբների նորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 33,327.9 հազար դրամ՝ նախատեսված 77,324.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 43.1%, որի սահմաններում հիմնանորոգվել են Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք և Շենգավիթ վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի շուրջ 72 վթարային պատշգամբներ: Ծրագիրը 2023 թվականի համեմատ կատարվել է 27,214.9 հազար դրամով պակաս:

78. Կաթսայատների և գույքերի պահպանում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 15,450.2 հազար դրամ՝ նախատեսվածի և 2023 թվականի փաստացի իրականացված ծախսի չափով, ինչն ամբողջությամբ ուղղվել է Երևանի սեփականություն հանդիսացող կաթսայատների պահպանմանը:

79. Զրային կառույցների շահագործում և պահպանում ծրագրով նախատեսվել է 46,000.0 հազար դրամ՝ որն ամբողջությամբ ուղղվել է թվով 39 ջրային կառույցների պահպանման

համար 2023 թվականին կնքված պայմանագրի ֆինանսավորմանը, որի մասով 2023 թվականին փաստացի իրականացվել է 460,000.0 հազար դրամի ծախս:

80. Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և գույքի ձեռքբերում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 147,459.8 հազար դրամ՝ նախատեսված 225,108.0 հազար դրամի դիմաց, կամ ընդհանուր կատարողականը կազմել է 65.5%, որը 2023 թվականի համեմատությամբ կատարվել է 139,358.3 հազար դրամով պակաս: Ծրագրի շրջանակներում կնքվել են պայմանագրեր 5 անուն թվով 8 բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով, մասնավորապես՝ 1 հատ ռենտգեն ախտորոշման սարք, 2 հատ ուլտրաձայնային սարք 3 տվիչով, 3 հատ ուլտրաձայնային սարք 4 տվիչով, 1 հատ հիվանդի կարդիոմոնիտորինգային համակարգ՝ կենտրոնական կայանով, որոնք տրամադրվել են Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպություններին, ինչպես նաև «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի աշխատակիցների համար ձեռք է բերվել ձմեռային արտահագուստ:

81. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 212,966.1 հազար գրամ գումար, որի փաստացի ծախսը կազմել է 137,882.2 հազար դրամ, կամ ընդհանուր կատարողականը կազմել է 64.7%, 2023 թվականի համեմատությամբ՝ 309,332.5 հազար դրամով պակաս: Ծրագրի շրջանակներում իրականացվել և ֆինանսավորվել են Արաբկիր վարչական շրջանի «Երևանի «Արաբկիր» առողջության կենտրոն» ՓԲԸ /Նոր Արաբկիր առողջության կենտրոն/ հիմնանորոգման, «Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ հիմնանորոգում բակի բարեկարգման, «Երևանի «Ավան» առողջության կենտրոն» ՓԲԸ /Թիվ 12 պոլիկլինիկա/, «Երևանի «Բաղրամյան» առողջության կենտրոն» ՓԲԸ /Թիվ 8 պոլիկլինիկա/ հիմնանորոգման աշխատանքները, որպես պայմանագրի անցում, ինչպես նաև «Երևանի Սուրբ Աստվածամայր» ԲԿ 9 հարկանի շենքի համար թվով 1 հատ և Ավան վարչական շրջանի հ. 12 պոլիկլինիկայի համար թվով 2 հատ վերելակների ձեռքբերում:

82. Դժվարամատչելի հետազոտությունների իրականացում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 94,506.0 հազար դրամ՝ նախատեսված 99,340.0 հազար դրամի դիմաց, միաժամանակ կատարվելով 2023 թվականի փաստացի ցուցանիշից 4,231.0 հազար դրամով ավելի: Փաստացի ցուցանիշի նկատմամբ շեղումը պայմանավորված է նշված բժշկական ծառայությունից օգտվողների քանակով: Նշված ծրագրի շրջանակներում Երևան համայնքի բնակիչներին տրամադրվել է 95 կոնտրաստավորմամբ և առանց կոնտրաստավորման կոմպյուտերային տոմոգրաֆիայի, թվով 101 մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի, 72 մամոգրաֆիայի, թվով 110 կորոնարոգրաֆիայի ծառայություն և թվով 91 ստենտավորման ծառայություն:

83. Սպորտային միջոցառումների կազմակերպում ծրագրով փաստացի ծախսը ավել է 2023 թվականի փաստացի ցուցանիշից 20.8%-ով և կազմում է 305,513.5 հազար դրամ՝ նախատեսված 310,357.7 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.4%, որի շրջանակներում Երևան քաղաքում 2024 թվականին իրականացվել են մի

շարք սպորտային միջոցառումներ, մասնավորապես Երևանի քաղաքապետարանի կողմից իսկանացվել են հետևյալ միջոցառումները. Բոնցքամարտի Երևան քաղաքի բաց առաջնություն միջազգային մրցաշար, Հունահռոմեական ոճի ըմբշամարտի Երևանի բաց առաջնություն միջազգային հուշամրցաշար՝ նվիրված Բենուր Փաշայանին, Մարմնամարզության Երևան քաղաքի բաց առաջնություն միջազգային մրցաշար, Ազատ ոճի ըմբշամարտի Երևան քաղաքի բաց առաջնություն միջազգային մրցաշար, Ձյուդոյի Երևան քաղաքի բաց առաջնություն միջազգային մրցաշար, Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային մրցաշար, Երևանցի տարեցների մրցույթ՝ 5 մարզաձևերից, Բասկետբոլի Երևան քաղաքի առաջնություն, Շախմատի Երևան քաղաքի առաջնություն, Սեղանի թենիսի Երևան քաղաքի առաջնություն, Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված մարզամշակութային միջոցառում, ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների 2024թ. սպարտակիադա, ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև 2024 թվականին անցկացվող «Սպորտլանդիա» մարզական միջոցառման երևանյան փուլ հանրապետական փուլին պատշաճ մասնակցելու համար, Նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր, Վոլեյբոլի միջազգային մրցաշար, «Բարեկամության գավաթ» միջազգային մրցաշար, «Երևան մարաթոն» մրցաշար, Ռուդոլֆ և Եղիշե Կարապետյանների հիշատակին նվիրված ազատ ոճի ըմբշամարտի միջազգային մրցաշար, Հունահռոմեական ոճի ըմբշամարտի բաց առաջնություն միջազգային հուշամրցաշար՝ նվիրված Հ. Խաչատրյանին և Ա. Մնացականյանին, Ռաֆայել Վահանյանի անվան միջազգային մրցաշար, Հրաձգության առաջնություն Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցների միջև՝ նվիրված հայրենիքի պաշտպանության համար զոհված հերոսների հիշատակին, Ֆուտզալի Երևան քաղաքի բաց առաջնություն Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցների միջև, Հեծանվասպորտի Երևան քաղաքի բաց առաջնություն, 2024թ. տարեվերջյան պարզևատրում՝ Երևան քաղաքի լավագույն մարզիկներին, Սթրայքբոլի առաջնություն Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցների միջև, Երևանի քաղաքապետի գավաթ, Երևան քաղաքի վարչական շրջանների կողմից իրականացվել են. Երևանի Աջափնյակ վարչական շրջանի գավաթ բաց մրցաշար բասկետբոլ, վոլեյբոլ կամ հանդբոլ, Միջմանկապարտեզային սպորտլանդիա և Շաշկու մրցաշարի կազմակերպում, Աջափնյակ վարչական շրջանի շախմատի բաց առաջնություն, Աջափնյակ վարչական շրջանի հուահռոմեական ոճի ըմբշամարտի Արսեն Կոտիկյանի անվան բաց հուշամրցաշար, «Շախմատի մրցաշար թվով 12 վարչական շրջանների աշխատակազմերի միջև», Արաբկիր վարչական շրջանի տարվա լավագույն մարզիչ, մարզիկ, թիմ, Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակին նվիրված շախմատի հուշամրցաշար, ՀՀ ավանդական շարժախաղեր, Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի գավաթի առաջնություն, Լավագույն մարզական

նախադպրոցական հաստատություն» միջոցառում, Ռազմաուսումնամարզական խաղեր, Տարեվերջյան արդյունքների ամփոփում, Կենտրոն վարչական շրջանի հանրակրթական դպրոցների աշակերտների միջև անկացվող սպորտլանդիա, Կենտրոն վարչական շրջանի «Ղեկավարի գավաթ» ֆուտզալ մարզաձևից, «Սպորտի միջազգային օր» Կենտրոն վարչական շրջանում, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի գավաթի թեթև ատլետիկայի (գեղարվեստական մարմնամարզության) մրցաշար, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դպրոցականների ֆուտբոլի առաջնություն, ՀՀ անկախության տարեդարձին նվիրված դպրոցականների մարզական խաղեր «Վազք-լազերային հրաձգություն» դպրոցականների առաջնություն, Ազգային ժողովի գավաթի խաղարկություն, «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազք Նոր Նորք վարչական շրջանի 10 լավագույն մարզիկներ, Մարզական Նորք-Մարաշ, Սպորտակիադա, Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի գավաթի համար մանկապատանեկան փառատոն, Առողջ սերունդ պաշտպանված հայրենիք համաքաղաքային փառատոն, Բոուլինգի առաջնություն Երևանի քաղաքապետարանի և 12 վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի միջև, Բոուլինգի առաջնություն Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ներկայացուցիչների և 32 ՀՈԱԿ-ների աշխատակազմերի միջև:

Իրականացվել են նաև՝ 1155 մարզիկ-մարզիչների գործուղումներ Հայաստանի տարբեր քաղաքներ և մարզեր, ինչպես նաև Երևան քաղաքի մարզիկ-մարզիչներին միջազգային մրցաշարերին մասնակցության ապահովում, 76 մարզիկ-մարզիչներ Հայաստանում գործող մարզական ֆեդերացիաներ ներկայացնող մարզիկների ուսումնամարզական հավաքներին մասնակցություն և գործուղում միջազգային մրցաշարերին: Ծրագրի շրջանակներում 48,750.0 հազար դրամ հատկացվել է Հայաստանի Հանրապետությունը միջազգային ասպարեզում ներկայացրած, Աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում մրցանակակիր դարձած և 2024 թվականի Օլիմպիական ուղեգիր նվաճած երևանցի թվով 10 մարզիկ-մարզուհիներին և իրենց մարզիչներին որպես դրամական պարգևատրում, ինչպես նաև 2024 թվականին Փարիզում տեղի ունեցած օլիպիական խաղերին Հայաստանը ներկայացնող 4 մեդալակիր մարզիկների պարգևատրում:

84. Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,481,140.7 հազար դրամ՝ նախատեսված 1,702,994.7 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 87.0%, 2023 թվականի նկատմամբ՝ 218,853.6 հազար դրամով ավելի, որից 25,842.0 հազար դրամն ուղղվել է Սիրահարների զբոսայգու պահպանմանը, 32,119.3 հազար դրամը Հաղթանակ զբոսայգու Անմար կրակի գազամատակարարման և այգիներում էլեկտրաէներգիայի մատակարարման, 7,985.3 հազար դրամը Երևանի 2800-ամյակի այգու ջրամատակարարման ծառայությանը: Դեռևս նախորդ տարիներին մեկնարկած՝ 2-րդ աշխարհամարտում տարած Հաղթանակի 40-ամյակի այգու հուշարձանի և հարակից

տարածքի բարեկարգման աշխատանքներին ուղղվել է 47,901.8 հազար դրամ, Նոր Նորքի 2-րդ զանգվածի Վերածննդի այգու բարեկարգման աշխատանքներին՝ 355,650.2 հազար դրամ, Նոր Նորք վարչական շրջանի Սուրբ Սարգիս եկեղեցու և Դավիթ Բեկ փողոցի միջնամասում գտնվող այգու հիմնանորոգմանը՝ 305,253.4 հազար դրամ, Դավթաշեն 1-ին և 2-րդ թաղամասերի միջև գտնվող կենտրոնական այգու հիմնանորոգմանը՝ 300,004.8 հազար դրամ, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մոտ շատրվանների կառուցման և շրջակա տարածքի բարեկարգմանը՝ 89,904.0 հազար դրամ, Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի հարակից տարածքի բարեկարգմանը՝ 11,556.7 հազար դրամ, ինչպես նաև Օղակաձև այգում գտնվող «Նեմեսիս» հուշարձանի հարակից տարածքի և Նոր Արաբկիր զբոսայգու «Արագիլներ» կոմպոզիցիայի պատվանդանի բարեկարգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների պայմանագրերի պարտքերի մարմանը՝ 102.0 հազար դրամ: 304,821.1 հազար դրամի շրջանակներում վարչական շրջանների այգիներում իրականացվել են բարեկարգման, հիմնանորոգման և կահավորման աշխատանքներ (աղյուսակ 10):

Աղյուսակ 10

Երևան քաղաքի վարչական շրջաններում՝ հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում ծրագրով իրականացված աշխատանքները՝ ըստ հասցեականության

ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ	ՀԱՍՑԵՆԵՐ	2024Թ. ԱՎԱՐՏՎԱԾ
ԱԶԱՓՆՅԱԿ	1. Բաշինջաղյան 191շենք	✓
	2. Մարգարյան 41	✓
	3. Բաշինջաղյան 183-185	✓
	4. Լենինգրադյան 12-14շենք	✓
	5. Բաշինջաղյան 1-նրբանցք 15շենք	✓
	6. Բաշինջաղյան 2նրբ. 1շենք	✓
	7. Հալաբյան 55	✓
	8. Ազատամարտիկների այգի	✓
	9. Մազմանյան 5	✓
	10. Նազարբեկյան 21	✓
	11. Շինարարներ 10/1	✓

ԱՐԱՔԿԻՐ	1. Քանաքեռ ՀԷԿ այգում շների սահմանազատված տարածք	✓
	2. Քանաքեռ ՀԷԿ այգու նորոգում	✓
ԴԱՎԹԱՇԵՆ	1. Դավթաշեն 1-ին թաղամասի և հ.200 դպրոցի հարակից տարածքում պուրակի հիմնում	✓
ՄԱԼԱԹԻԱ-ՍԵՔԱՍՏԻԱ	1. «Երիտասարդական այգում արտաքին լուսավորության ցանցի կառուցման» աշխատանքներ	✓
ՆՈՐ ՆՈՐՔ	1. Նորքի 7-րդ գ. հրաձգարանի հարակից տարածքում շների զբոսանքի համար առանձնացված տարածքի կառուցում	✓
	2. Գայի 2 շ.հարակից այգու բարեկարգում	✓
ՆՈՐՔ ՄԱՐԱՇ	1. Նորք-Մարաշ վ/շ 13-րդ փողոցի վերջնամասում 153 հասցեի հարակից տարածքում զբոսայգու՝ ծաղիկների պուրակի կառուցման աշխատանքներ	✓
ՆՈՒԲԱՐԱՇԵՆ	1. 6-րդ փ. սկզբնամաս Նուբարաշեն գրվածքով ցուցանակի հարակից տարածք	✓
	2. 9փ հարակից այգու շատրվանների կից տարածք	✓
	3. 9-րդ փող. Կենտրոնական զբոսայգի	✓
ՔԱՆԱՔԵՌ-ՉԵՅԹՈՒՆ	1. Մ. Ավետիսյան պուրակում շների զբոսանքի համար առանձնացված տարածքի կառուցում	✓
	2. Դրո-Ահարոնյան փողոցների հատման մասի հարակից այգում շների զբոսանքի համար առանձնացված տարածքի կառուցում	✓

85. Երևանի բուսաբանական այգու տարածքում անտառպուրակի կառուցման աշխատանքներ (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսված

աշխատանքները գտնվում են շարունակական փուլում սկսած 2023 թվականից: 2024թ. նախատեսված 2,200,000.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 1,280,205.3 հազար դրամ՝ 58.2 %, իսկ 2023 թվականին ծրագրի կատարողականը կազմել է 246,340.1 հազար դրամ: Աշխատանքները կշարունակվեն մինչև 2026 թվական:

86. Սպորտային գոտիների և մարզական կենտրոնների կառուցում ու պահպանում ծրագրով 2023 թվականի փաստացի ծախսը կազմել է 86,350.8 հազար դրամ, իսկ 2024 թվականին նախատեսված 522.0 հազար դրամը փաստացի ուղղվել է նախորդ տարիների տեխնիկական հսկողության պայմանագրերի անցումների վճարումներին:

87. Գրադարանային ծառայություններ ծրագրով փաստացի ծախսվել է 712,211.4 հազար դրամ գումար նախատեսված 713,131.0 հազար դրամի դիմաց, 2023 թվականի փաստացի ցուցանիշը կազմել է 679,882.2 հազար դրամ, որն ուղղվել է Երևանի համայնքային թվով 19 գրադարանային կազմակերպությունների սուբսիդավորմանը:

88. Գրադարանների համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում ծրագրով նախատեսված 40,000.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմում է 30,301.9 հազար դրամ կամ 75.8 %, ինչը 2023 թվականի փաստացի ցուցանիշից պակաս է 9,008.3 հազար դրամով, որի շրջանակներում ձեռք բերվել և Երևանի գրադարաններին է տրամադրվել շուրջ 8788 հատ գիրք:

89. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ ծրագրով նախատեսվել և փաստացի ծախսվել է 258,224.1 հազար դրամ՝ 2023 թվականի 353,391.2 հազար դրամի նկատմամբ, որն ամբողջությամբ ուղղվել է Երևանի ենթակայության ներքո գործող «Երևան քաղաքի Պատմության թանգարան», «Ժամանակակից արվեստի թանգարան», «Կարեն Դեմիրճյանի թանգարան» և «Ֆ. Նանսենի թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության պահպանման ծախսերին:

90. Թանգարանների նորոգում ծրագրով նախատեսվել է 63.0 հազար դրամ, որն ուղղվել է Երևան քաղաքի ժամանակակից արվեստի թանգարանի աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նախորդ տարվա պայմանագրի վճարմանը: 2023 թվականին ծրագրի կատարողականը կազմել է 8,733.6 հազար դրամ:

91. Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 532,751.5 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, 2023 թվականի 529,843.3 հազար դրամի նկատմամբ, որն ամբողջությամբ ուղղվել է Երևանի ենթակայության թվով 13 մշակույթի կենտրոնների պահպանման համար:

92. Մշակութային միջոցառումների իրականացում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 3,697,284.1 հազար դրամ՝ նախատեսված 3,813,096.7 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 97.0%, ինչը նաև 2023 թվականի փաստացի ցուցանիշից ավել է 110.6%-ով: Ծրագիրը ներառում է Երևանի քաղաքապետարանի և 12 վարչական շրջանների կողմից կազմակերպված մշակութային միջոցառումները, որոնցից

են Արտիստը դպրոցին, Ամանորի և Սուրբ ծնունդին նվիրված միջոցառումներ, Երևանը կանանց համար, Հայոց բանակի, Կանանց տոնին նվիրված միջոցառումներ, Զազի միջազգային օր, Երևանի երաժշտական և արվեստի դպրոցների մրցույթ-փառատոն, Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա ստուգատես-փառատոն, կայուն էներգիայի շաբաթ միջոցառում, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան նվիրված մշակութային միջոցառումների իրականացման ծառայություններ, գիրք նվիրելու օրվան, Զազի միջազգային օրվան նվիրված մշակութային միջոցառումներ, կինոփառատոնի երեխաների իրավունքների պաշտպանության օր, Երևան պատանեկան սիմֆոնիկ նվագախմբի համերգային ծրագրերի իրականացում, "YEREVANCLASSICFEST" փառատոն, Երևանի 2806 ամյակին նվիրված Էրեբունի-Երևան, Անգլիայի ազգային բալետի հյուրախաղերի կազմակերպում, փառատոնների կազմակերպում, Հոբեյաններին նվիրված դրամաշնորհային ծրագրեր, «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոն, միաժամանակ վարչական շրջանների կողմից կազմակերպվում են՝ Թատրոնի միջազգային օր, Մայրության և գեղեցկության օր, Սուրբ Հարության կամ Զատիկի տոն, Վերջին զանգ, ՀՀ Անկախության օր, ՌԽուցջի օր, Գիտելիքի օր, Տյառնընդառաջ, Գիրք նվիրելու օր, Վարդավառ, Առաջին հանրապետության անկախության օր, Շառլ Ազնավուրի ծննդյան 100 ամյակին նվիրված միջոցառում, Աշխատանքի օր և և մի շարք այլ միջոցառումների կազմակերպում:

93. Կենդանաբանական այգու ցուցադրություններ ծրագրով փաստացի ծախսը կազմել

է 415,700.2 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որն ուղղվել է «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերին: 2023 թվականին ծրագրի փաստացի ծախսը կազմել է 429,904.8 հազար դրամ:

94. Կենդանաբանական այգու հիմնանորոգում ծրագրի ծախսը կազմել է 3,009.7 հազար դրամ՝ նախատեսված 3,356.7 հազար դրամի դիմաց, որով որպես պայմանագրի անցում իրականացվել է Կենդանաբանական այգու էլեկտրականության ներքին ցանցի բարելավման աշխատանքները, վերջինիս իրականացման համար 2023 թվականին փաստացի ծախսվել է 55,093.7 հազար դրամ:

95. Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է նախատեսվածի չափով՝ 176,048.5 հազար դրամ, որն ուղղվել է «Հայ-Արտ մշակութային կենտրոն» ՓԲԸ-ի, «Յուրի Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա» ՀՈԱԿ-ի, «Երևան փողային նվագախումբ» ՀՈԱԿ-ի և «Հայաստանի փոքրիկ երգիչներ մանկական ֆիլհարմոնիա» ՀՈԱԿ-ի պահպանմանը: Վերոնշյալ կազմակերպությունների պահպանման ծախսերը 2023 թվականին կազմել են 149,737.4 հազար դրամ:

96. Թատերական ներկայացումներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 448,848.1 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և 2023 թվականի փաստացի ցուցանիշից 8,216.5 հազար դրամով պակաս, որը հատկացվել է Երևանի ենթակայության թվով 3 թատրոնների՝ «Երևանի Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն», «Երևանի պատանի

հանդիսատեսի թատրոն» և «Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» ՀՈԱԿ-ների պահպանմանը:

97. Թատրոնների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 466,348.1 հազար դրամ, որի դիմաց 33,481.4 հազար դրամով կատարվել են Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոնի վարչական շենքի հիմնանորոգման մնացորդային մասի և «Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոն» ՊՈԱԿ-ի և «Մանկապատանեկան ստեղծագործական քաղաքային կենտրոնի» տարածքների հիմնանորոգման վճարումները: Ծրագրի կատարողականը պակաս է 2023 թվականի կատարողականից 296,109.6 հազար դրամով:

98. Հուշարձանների վերանորոգում և պահպանում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 75,557.8 հազար դրամ՝ նախատեսված 169,414.2 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 44.6%, ինչը 2023 թվականի փաստացի ցուցանիշից ավել է 46,648.4 հազար դրամով: Ծրագրով իրականացվել է՝ Շառլ Ազնավուրին նվիրված «Լա Բոհեմ» արձանի տեղադրում, Ա. Թամանյանի հուշարձանի շրջակա տարածքի բարեկարգման աշխատանքներ և պատմամշակութային հուշարձանների ցուցանակների տեքստերի մշակում և ձայնագրում:

99. Երիտասարդական միջոցառումների իրականացում ծրագրով ծախսեր կազմել է 2,240.0 հազար դրամ նախատեսված 3,000.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակում իրականացվել է՝ կամավորների միջազգային օրվա կապակցությամբ Երևան համայնքի լավագույն կամավորների պարգևատրման միջոցառում, երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ տոնական համերգի և ցուցահանդեսի կազմակերպում, ինչպես նաև նվիրատվություն է հատկացվել հասարակական կազմակերպություններին երիտասարդական միջոցառումների կազմակերպման նպատակով: 2023 թվականին ծրագրով ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

100. Անդամակցության վճարներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 27,134.9 հազար դրամ՝ նախատեսված 29,639.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 91.6%, ինչը 2023 թվականի փաստացի ցուցանիշից ավել է 11,859.6 հազար դրամով: Ծրագիրն իր մեջ ներառում է Ֆրանսախոս քաղաքների քաղաքապետերի միջազգային ասոցիացիային, Եվրոպական քաղաքների ասոցիացիային (EUROCITIES), LUCI ASSOCIATION, Հայաստանի համայնքների միությանը, «Տեղական իշխանությունները հանուն կայունության» ասոցիացիային, ԱՊՀ մայրաքաղաքների և խոշոր քաղաքների միջազգային ասամբլեան, Համաշխարհային ժառանգության քաղաքների կազմակերպությանը, «Բնության պահպանման միջազգային միություն» միջազգային բնապահպանական կազմակերպությանը հատկացվող գումարները:

101. Նախադպրոցական ուսուցում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 12,546,785.1 հազար դրամ՝ նախատեսված 12,548,985.2 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում ֆինանսավորվել են թվով 162 մուր-մանկապարտեզներ: 2024 թվականի ցուցանիշը 2023 թվականի համեմատ ավել է՝ 2,236,311.5 հազար դրամով կամ 21.70 %-ով: Երևանի ենթակայության մուր-մանկապարտեզների ամսական ֆինանսավորումը կատարվել է

Երևանի քաղաքապետի՝ 23.02.2024 թվականի հ.723-Ա որոշման Հավելված 1-ով սահմանված կարգով հաշվարկված՝ հաստատության տարեկան ֆինանսավորման (ՀՏՖ) կազմի մեջ մտնող՝ աշխատավարձի տարեկան ֆոնդի և պահպանման ծախսերի հանրագումարը բաժանելով 12-ի և վերջինիս ավելացնելով հաստատության սաների յուրաքանչյուր ամսվա փաստացի հաճախելիության հիման վրա հաշվարկված սննդի ծախսը: Նորոգվող մանկապարտեզները ֆինանսավորվել են փաստացի ծախսի հաշվարկների հիման վրա: 28,664.0 հազար դրամն ուղղվել է թվով 9 հանրակրթական ուսումնական հաստատություններում, մասնավորապես՝ «Երևանի Վ. Վաղարշյանի անվան հ. 80 հիմնական դպրոց», «Երևանի Յ. Լեփսիուսի անվան հ. 88 հիմնական դպրոց», «Երևանի հ. 98 հիմնական դպրոց», «Երևանի հ. 99 միջնակարգ դպրոց», «Երևանի հ.110 հիմնական դպրոց», «Երևանի Պ. Սևակի անվան հ. 123 հիմնական դպրոց», «Երևանի Մ. Մեծարենցի անվան հ.146 հիմնական դպրոց», «Երևանի Ռ. Սևակի անվան հ. 151 հիմնական դպրոց», «Երևանի հ. 167 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ներում, նախակրթարաններ հիմնելու նպատակով՝ նախակրթարանի տարածքի վերանորոգում իրականացնող աշխատուժի, ինչպես նաև դաստիարակների վարձատրությանը:

102. Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 267,151.7 հազար դրամ՝ նախատեսված 345,381.5 հազար դրամ գումարի դիմաց, կամ կատարողականը կազմել է 77.3%, որը՝ 2023 թվականի ցուցանիշից ավել է 190,710.5 հազար դրամով: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել և Երևան քաղաքի մանկապարտեզներին բաշխվել է շուրջ 26 անուն թվով 7317 գույք և տեխնիկա: Հիմնական միջոցների ձեռք բերման նպատակով նաև կապիտալ դրամաշնորհներ են տրամադրվել Երևան քաղաքի թվով 121 մսուր-մանկապարտեզներին:

103. Նախադպրոցական կրթության հասանելիության և որակի ապահովում (պատվիրակված լիազորություններ) ծրագիրը 2024 թվականին կատարվել է ամբողջությամբ փաստացի ծախսը կազմելով՝ 22,719.2 հազար դրամ, որը՝ 2023 թվականի համեմատ պակաս է 4,317.8 հազար դրամով: Ծրագրի շրջանակներում՝ որպես պատվիրակված լիազորություն, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ֆինանսավորվել են թվով 11՝ «Երևանի Ալ.Շիրվանզադեի անվան հ.21 հիմնական դպրոց», «Երևանի Ա.Նավասարդյանի անվան հ.196 հիմնական դպրոց», «Երևանի Վահան Տերյանի անվան հ.60 հիմնական դպրոց», «Երևանի Ստեփան Շահումյանի անվան հ.1 հիմնական դպրոց», «Երևանի Է.Թելմանի անվան հ.13 հիմնական դպրոց», «Երևանի Զ.Կիրակոսյանի անվան հ.20 հիմնական դպրոց», «Երևանի հ.186 հիմնական դպրոց», «Երևանի հ.175 միջնակարգ դպրոց», «Երևանի հ.31 հիմնական դպրոց», «Երևանի Ալ.Մյասնիկյանի անվան հ.66 հիմնական դպրոց», «Երևանի Հակոբ Պարոնյանի անվան հ.59 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ները՝ դրանցում գործող նախակրթարանների մանկավարժների և մանկավարժների օգնականների աշխատավարձերը փոխհատուցելու նպատակով:

104. Սոցիալական որոշ խմբերի 1,5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ապահովում /պատվիրակված լիազորություններ/ ծրագրի շրջանակներում

նախատեսված 853,455.0 հազար դրամի դիմաց ` ՀՀ կառավարության 15.07.2021 թվականի հ. 1169-Ն որոշմամբ սահմանված ֆինանսավորման կարգին համապատասխան 853,298.9 հազար դրամը տրամադրվել է Երևան քաղաքի ենթակայությամբ գործող նախադպրոցական ուսումնական հաստատություններին` թվով 684 կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ու թվով 1657 զինծառայող ծնողի երեխաների նախադպրոցական կրթությունն ապահովելու նպատակով: Ծրագրի ցուցանիշը` 546,461.0 հազար դրամով ավել է 2023 թվականին իրականացված փաստացի ծախսից:

105. Պետական աջակցությամբ իրականացվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցում և հիմնանորոգում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսված 2,227,695.5 հազար դրամի դիմաց փաստացի իրականացվել է 779,124.5 հազար դրամի ծախս, որը` 2023 թվականի համեմատ ավել է 124,120.1 հազար դրամով կամ 18.95 %-ով: Ծրագրի շրջանակներում շարունակվել են իրականացվել դեռևս 2023 թվականին մեկնարկած Շենգավիթ վարչական շրջանի հ. 140 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները, ինչպես նաև բարեկարգման աշխատանքներ են իրականացվել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ.76, հ.77, հ.81, հ.82, հ.88, հ. 90, Էրեբունի վարչական շրջանի հ.63, Շենգավիթ վարչական շրջանի հ.135, հ.138, Դավթաշեն վարչական շրջանի հ.61, Նոր Նորք վարչական շրջանի հ.109, հ. 110, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի հ.161, Աջափնյակ վարչական շրջանի հ. 47, Կենտրոն վարչական շրջանի հ.15 մանկապարտեզների բակային տարածքներում, որոնց մասով աշխատանքները կշարունակվեն նաև 2025 թվականին:

106. Մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված համակարգի ներդրում` նախադպրոցական հաստատությունների մանկավարժներին տարակարգի շնորհման գործընթացի միջոցով/պատվիրակված լիազորություններ/ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,227.2 հազար դրամ նախատեսված 1,310.4 հազար դրամի դիմաց, որը` 2023 թվականի ցուցանիշից ավել է 1,040.0 հազար դրամով: Ծրագրի շրջանակում 2024 թվականին թվով 6 մանկավարժ ստացել է տարակարգ, որի հիմքով էլ նրանց տրամադրվել է հավելավճար:

107. Նախադպրոցական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժների վերապատրաստում(պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսված 5,890,8 հազար դրամի դիմաց փաստացի իրականացվել է 5,860.6 հազար դրամի ծախս, որն ուղղվել է Երևան քաղաքի ենթակայությամբ գործող մանկապարտեզների թվով 262 մանկավարժների վերապատրաստմանը և կարողությունների զարգացմանը: 2023 թվականի բյուջեով նշված ծրագրի մասով ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

108. Հանրակրթական ուսուցում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 18,931,683.6 հազար դրամ, նախատեսված 18,932,918.4 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում, որպես պատվիրակված լիազորություն, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով

Ֆինանսավորվել են Երևանի քաղաքապետարանի կողմից համակարգվող թվով 152 դպրոցները: Ծրագրի ցուցանիշը՝ 999,299.9 հազար դրամով ավել է 2023 թվականի փաստացի ծախսից:

109. Բնագիտական ոլորտի առարկաներ դասավանդող ուսուցիչներին հավելավճարի տրամադրում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով իրականացվել է 295,794.4 հազար դրամի ծախս՝ նախատեսվածի չափով, 2023 թվականի փաստացի ցուցանիշի՝ 93,141.6 հազար դրամի դիմաց: Ծրագրի շրջանակում ֆինանսավորվել են Երևանի քաղաքապետարանի կողմից համակարգվող դպրոցների թվով 1702 ուսուցիչներ:

110. Արտադպրոցական դաստիարակություն ծրագրով փաստացի ծախսը կազմել է 4,928,470.2 հազար դրամ՝ նախատեսված 4,941,884.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.7%, որից 4,916,588.6 հազար դրամն ուղղվել է Երևան քաղաքի ենթակայությամբ գործող երաժշտական, արվեստի դպրոցների, մարզադպրոցների, շախմատի դպրոցների ֆինանսավորմանը, իսկ 3,419.0 հազար դրամ գումարը տրամադրվել է դպրոցականների ամառային հանգստի համար տրանսպորտի վարձակալության ծառայությանը, իսկ 8,462.6 հազար դրամն ուղղվել է հեծանվահրապարակի էլեկտեկրաէներգիայի ծախսի ֆինանսավորմանը: Ծրագրի ցուցանիշը 2023 թվականի փաստացի ծախսից ավել է՝ 222,267.1 հազար դրամով:

111. Արտադպրոցական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում ծրագրով 2024 թվականի բյուջեով նախատեսված 89,049.8 հազար դրամ գումարի և 2023 թվականի փաստացի ցուցանիշի 11,763.9 հազար դրամի դիմաց՝ 2024 թվականին փաստացի կատարված 83,249.9 հազար դրամ գումարով ձեռք է բերվել և տրամադրվել Երևան քաղաքի ենթակայությամբ գործող մարզադպրոցներին 38 անուն թվով 839 մարզագույք՝ մարմնամարզության գորգ, մարմնամարզական պտտածող, ըմբշամարտի գորգ, ծանրածող/լրակազմ/, ռետինե հանտել, շախմատի ցուցադրական խաղատախտակ, ցանց, բռնցքամարտի տանձիկ, պտտածող, պարան մագլցման, ֆուտբոլի գնդակ, հանդբոլի գնդակ, հեծանիվ-դահուկ, էլեկտրոնային վայրկյանաչափ և այլ մարզական գույք, ինչպես նաև ձեռք է բերվել թվով 19 երաժշտական գործիքներ՝ ջութակ, ալտ, թավջութակ, ֆլեյտա, գալարափող, ֆագոտ, հոբոյ և տրամադրվել «Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ին՝ «Երևան» պատանեկան սիմֆոնիկ նվագախմբի փորձերի և համերգների իրականացման ընթացքում օգտագործելու նպատակով:

112. «Հակոբ Կոջոյան» կրթահամալիր ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպում ծրագրով (պատվիրակված լիազորություններ) 2023 թվականի փաստացի ծախսը, ինչպես նաև 2024 թվական նախատեսվածն ու փաստացի ծախսը կազմել է 6,793.0 հազար դրամ, որը հատկացվել է ՀՀ 2024 թվականի պետական բյուջեից՝ որպես պատվիրակված լիազորություն, հաշվի առնելով կրթահամալիրի առաձնահատկությունները:

113. Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում 2024 թվական նախատեսված, ինչպես նաև 2023

թվականի և 2024 թվականի փաստացի ծախսը կազմել է 60,353.9 հազար դրամ, որը հատկացվել է ՀՀ 2024 թվականի պետական բյուջեից՝ որպես սուբվենցիա, Երևան քաղաքի թվով 24 երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների դասարաններում սովորող թվով 277 աշակերտների ուսման վարձավճարների փոխհատուցման նպատակով:

114. Կամավոր ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների որակի բարձրացմանը(պատվիրակված լիազորություններ) փաստացի ծախսը կազմել է 35,709.3 հազար դրամ՝ նախատեսված 35,763.0 հազար դրամի դիմաց, որը իր հերթին 29,917.3 հազար դրամով ավել է 2023 թվականի փաստացի ցուցանիշից: Ծրագրի շրջանակում փաստացի ատեստավորվել են Երևան քաղաքի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցների թվով 68, իսկ լրավճար ստացել թվով 67 աշխատակիցներ:

115. Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգում ծրագրի փաստացի ծախսը կազմել է 6,351.8 հազար դրամ՝ նախատեսված 6,972.7 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 91.1 %, որը որպես պայմանագրի անցում ուղղվել է Շենգավիթ համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցի նկուղային հարկի և թվով 7 մարզադահլիճների հիմնանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը: 2023 թվականին ծրագիրը կատարվել է 160,168.1 հազար դրամի չափով:

116. Նախադպրոցական հաստատությունների կառուցում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 761,964.2 հազար դրամ գումար և փաստացի կատարվել 383,835.7 հազար դրամով: Ծրագրի շրջանակներում 286,055.4 հազար դրամով իրականացվել և ֆինանսավորվել են դեռևս նախորդ տարիներից մեկնարկած Դավթաշեն վարչական շրջանի հ. 58 մանկապարտեզի հիմնանորոգման, հ.61 մանկապարտեզի հիմնանորոգման և բակի բարեկարգման, Աջափնյակ վարչական շրջանի հ.44 մանկապարտեզի հիմնանորոգման, հ. 50 մանկապարտեզի հիմնանորոգման և բակի բարեկարգման աշխատանքները, Աջափնյակ վարչական շրջանի հ. 48, հ. 49, Էրեբունի վարչական շրջանի հ.71, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ. 90, Արաբկիր վարչական շրջանի հ. 22 և 23 մանկապարտեզների բակերի բարեկարգման աշխատանքները, ինչպես նաև մի շարք մանկապարտեզներում իրականացված աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունները՝ որպես պայմանագրի անցում: 5,349.8 հազար դրամն ուղղվել է Կենտրոն վարչական շրջանի հ.2 մանկապարտեզի ֆասադային հատվածի վերանորոգման, այդ թվում արտաքին պատերի ջերմամեկուսացման աշխատանքներին, իսկ 87,465.4 հազար դրամով բոլոր 12 վարչական շրջանների մանկապարտեզներում կատարվել են հրատապ, չնախատեսված ընթացիկ նորոգման աշխատանքներ: 4,965.1 հազար դրամ տրամադրվել է Կենտրոն վարչական շրջանի հ. 1 մանկապարտեզի ապամոնտաժման, Ավան վարչական շրջանի հ. 52 մանկապարտեզի ջեռուցման

համակարգի կառուցման աշխատանքներին՝ որպես պայմանագրի անցում: Ծրագրի փաստացի կատարողականը կազմել է 50.4 % և 2023 թվականի փաստացի ցուցանիշից 1,284,690.7 հազար դրամով պակաս:

117. Դպրոցական օլիմպիադաների և այլ միջոցառումների կազմակերպում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 44,551.8 հազար դրամ՝ նախատեսված 56,163.0 հազար դրամի դիմաց, որը իր հերթին 25,185.5 հազար դրամով ավել է 2023 թվականի փաստացի ցուցանիշից: Ծրագրի շրջանակներում գրքի և մայրենիի օրվան նվիրված միջոցառումների շրջանակներում աշակերտներին տրամադրվել է 25 անուն շուրջ 500 գիրք, կազմակերպվել են դպրոցականների առարկայական օլիմպիադաներ՝ Երևանի հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտների մասնակցությամբ, որի շրջանակներում շուրջ 600 լավագույնները պարգևատրվել են դիպլոմներով և շնորհակալագրերով, ապահովվել են պայմաններ առարկայական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպման համար: Իրականացվել են կիրառական ռազմագիտության մրցույթ-միջոցառումներ, ուսուցչի օրվան նվիրված միջոցառում, Երևանի դպրոցականների շրջագայություն՝ թվով 30 դպրոցի 7-9-րդ դասարանների շուրջ 1000 աշակերտներ «Երևանի սիթի տուր» զբոսաշրջային երթուղային ծրագրի շրջանակներում, խորհրդակցական մարմինների ներուժի զարգացմանն ուղղված ծրագրեր՝ սեմինար-դասընթաց շուրջ 500 անձի համար, հանրային առողջապահության մրցույթ-միջոցառումներ, որի շրջանակում պատրաստվել է 3 հատ սոցիալական տեսահոլովակ կրտսեր, միջին և ավագ դպրոցականների համար՝ ճանապարհային անվտանգության ապահովման, բուլինգի, կախվածության կանխարգելման վերաբերյալ, դպրոցների և մանկապարտեզների տնօրենների միջոցառում-խրախուսում, որի շրջանակում շուրջ 1070 աշխատակիցներ հրավիրվել են դիտելու «Օթելլո» օպերային ներակայացումը, իրականացվել է աշխատակազմի հանրակրթության վարչության անձնակազմի մասնակցությամբ սեմինարներ, կոնֆերանսներ, փոխայցելություններ, ինչպես նաև ձեռք է բերվել թվով 151 տուփ «Չկանոններ» քարտային խաղերի հավաքածու՝ նախատեսված աշակերտ-ուսուցիչ-ընտանիք հոգեբանական կապի ամրապնդմանը, և տրամադրվել Երևան քաղաքի ենթակայությամբ գործող թվով 151 դպրոցներին:

118. Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում (պատվիրակված լիազորություններ) ծրագրի փաստացի ծախսը կազմել է 30,417.8 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որը 2023 թվականի փաստացի ցուցանիշից 7,244.4 հազար դրամով պակաս է: Ծրագրի շրջանակում ատեստավորման արդյունքում թվով 162 ուսուցիչներ ստացել են հավելավճարներ:

119. Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսված 14,104.7 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 8,314.2 հազար դրամ կամ 2023

թվականի փաստացի ցուցանիշից 30,129.6 հազար դրամով պակաս, որի շրջանակում թվով 679 ուսուցիչների անցել են վերապատրաստումներ:

120. Կամավոր ատեստավորման համակարգի ներդրում՝ ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը ծրագրի փաստացի ծախսը կազմել է 843,487.2 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, ինչը 493,419.0 հազար դրամով ավել է 2023 թվականի ցուցանիշից: Նշված ծրագրի շրջանակներում կամավոր ատեստավորման արդյունքում Երևան քաղաքի դպրոցների 411 ուսուցիչներ ունեցել են դրույքաչափի բարձրացում և ստացել են հավելավճարներ, իսկ 177 ուսուցիչներ ստացել են միայն հավելավճարներ:

121. Հանրակրթական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 17,508.2 հազար դրամ՝ նախատեսված 18,119.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 96.6%, 2023 թվականին նշված ծրագրով ֆինանսական միջոցներ նախատեսված չեն եղել: Ծրագրի շրջանակում իրականացվել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թիվ 176 հիմնական դպրոցի ֆիզկուլտուրայի դահլիճի հիմնանորոգման աշխատանքներ:

122. Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսված 1,939.8 հազար դրամի դիմաց փաստացի ծախս չի իրականացվել: 2023 թվականին նշված ծրագրով իրականացվել է 11,982.5 հազար դրամի ծախս:

123. Հարազատ չունեցող անձանց հուղարկավորության կազմակերպում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 7,826.0 հազար դրամ՝ նախատեսված 15,769.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 49.6%, որը պակաս է 2023 թվականի փաստացի ցուցանիշից 4,752.0 հազար դրամով: Ծրագրի շրջանակներում իրականացվել է թվով 86 հարազատ չունեցող անձանց հուղարկավորության կազմակերպման ծառայություններ:

124. Երեխայի իրավունքների եւ շահերի պաշտպանություն ծրագրով ծախսը կազմել է 26,167.8 հազար դրամ՝ նախատեսված 27,557.2 հազար դրամի դիմաց: 2023 թվականին ծրագրի շրջանակում իրականացվել է 1,858.1 հազար դրամի ծախս, որը պակաս է 2024 թվականի ցուցանիշից 24,309.7 հազար դրամով: Ծրագրի շրջանակներում երեխաները ապահովվել են թվով 1745 գրենական պիտույքների փաթեթներով՝ պայուսակներ և գրենական պիտույքներ, թվով 675 սպորտային հագուստներով և կոշիկներով, տրամադրվել է թվով 5 առանց շարժիչի հեծանիվներ, 15 հատ գրասեղաններ, հիգիենայի պարագաներ, կազմակերպվել են էքսկուրսիաներ, այցելություններ թատրոններ, թանգարաններ, իրականացվել միջոցառումներ՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ:

125. Մշակութային և կրթական միջոցառումներ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,527.3 հազար դրամ՝ նախատեսված 3,300.0 հազար դրամի դիմաց: 2023 թվականին ծրագրով ֆինանսական միջոցներ նախատեսված չեն եղել: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել

է խնամատար ծնողների և հոգեզավակների այցելություն Երևան քաղաքի պատմության թանգարան: Միջոցառման ընթացքում 13 խնամատար ընտանիքում խնամք և դաստիարակություն ստացող 15 երեխաներին տրամադրվել են նվերներ: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև խնամակալների, հոգեբարձուների ընտանիքներում գտնվող թվով 30 երեխաների համար կազմակերպվել է այցելություն Պլանետարիում և Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան, ինչպես նաև թվով 500 երեխաներ Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում դիտել են «Ալիսը հայելիների աշխարհում» ամանորյա մանկական ներկայացումը:

126. Երեխաներին աջակցման նպատակով հատուկ սենյակների ստեղծում Երևան քաղաքի վարչական շրջաններում, Հանրակրթական դպրոցներում երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում ծրագրերով նախատեսվել է 6,300.0 հազար դրամ, սակայն փաստացի ծախս չի իրականացվել: 2023 թվականին այս մասով ֆինանսական միջոցներ նախատեսված չեն եղել:

127. Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում ծրագրերով նախատեսված 95,166.2 հազար դրամի դիմաց կատարվել է 81,251.1 հազար դրամի ծախս, որը 2023 թվականի փաստացի ցուցանիշից ավել է 21,387.6 հազար դրամով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ սոցիալական տարբեր խմբերի համար, 2024 թվականի ընթացքում Երևանի քաղաքապետարան դիմած սոցիալական խոցելի խմբերին դասվող բնակչության համար իրականացվել է բնակարանների վերանորոգման և հարմարեցման աշխատանքներ, տրամադրվել են սննդի փաթեթներ, տնտեսական ապրանքների փաթեթներ, հիգիենայի փաթեթներ, անկողնային պարագաներ և սպիտակեղեն, ինչպես նաև բժշկական սարքավորումներ՝ ճնշման չափիչ սարքեր, գույք և տեխնիկա՝ բազկաթոռ, բազմոց, գրասեղան, գազօջախ, էլեկտրական տաքացուցիչ և ջրատաքացուցիչ, լվացքի մեքենա, հեռուստացույց, սառնարան և այլն: Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների համար կազմակերպվել են հուղարկավորության ծառայություններ:

128. Հասարակական կազմակերպություններին աջակցություն ծրագրով փաստացի ծախսը կազմել է 84,396.5 հազար դրամ՝ նախատեսված 87,304.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 96.7%, որի շրջանակներում աջակցություն է տրամադրվել թվով 11 հասարակական կազմակերպությունների՝ տարբեր սոցիալական ծրագրերին աջակցելու նպատակով: 2023 թվականին ծրագրով փաստացի ցուցանիշը կազմել է 161,691.9 հազար դրամ:

129. Տարբեր սոցիալական խմբերի համար Երևան համայնքում որակյալ սոցիալական ծառայությունների կազմակերպում, Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն, Արտակարգ իրավիճակներում և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն, Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ, Սոցիալական

աջակցության կարիք ունեցող ընտանիքներին կայուն եկամուտ ապահովելու նպատակով զբաղվածության ծրագրերի կազմակերպում, Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում, Հայրենադարձ և փախստական ընտանիքներին աջակցություն ծրագրերով նախատեսված 187,354.3 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 160,625.5 հազար դրամ: 2023 թվականին ծրագրերի շրջանակում իրականացվել է 112,528.9 հազար դրամի ծախս: Ծրագրերի շրջանակներում Երևան համայնքում բնակվող՝ թվով 1000 միայնակ տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց համար իրականացվել է թվով 50 շրջագայություն Հայաստանի տեսարժան վայրեր, թվով 1070 տոմսերը տրամադրվել են պատերազմից տուժած ընտանիքներին /օր՝ զոհված, վիրավորում ստացած, անհետ կորած, հաշմանդամություն ձեռքբերած զինծառայողների ընտանիքներ և այլն/՝ «Գայանե» բալետ ներկայացումը դիտելու նպատակով, նոր մասնագիտությունների ձեռքբերման շրջանակում՝ կարուձև, մատնահարդարում, վարսահարդարում և դիմահարդարում, ընդգրկվել են 20 շահառուներ, որոնք ստացել են մասնագիտական գիտելիքներ, թվով 7 ընտանիքների տրամադրվել է ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում, թվով 14 ընտանիքների տրամադրվել է ֆինանսական աջակցություն բնակարանային պայմանների բարելավման նպատակով, բազմազավակ ընտանիքներին տրամադրվել են գույք և կենցաղային տեխնիկա, ձեռք են բերվել սննդի ծանրոցներ, կազմակերպվել են ընտանիքի անդամների հուղարկավորություններ:

130. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով փաստացի կատարողականը կազմել է 679,189.8 հազար դրամ՝ նախատեսված 691.632.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 98.2%, որը 2023 թվականի ցուցանիշից ավել է 16,087.7 հազար դրամով: Երևանի քաղաքի ենթակայությամբ գործունեություն իրականացնող կրթական ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների և «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի աշխատակիցները՝ թվով 9433 մարդ ապահովվել են սոցիալական փաթեթով:

131. Առողջության ապահովագրություն ծրագրով նախատեսված 809,273.7 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 809,230.5 հազար դրամ, որից 13,553.6 հազար դրամը ֆինանսավորվել է որպես նախորդ տարվա պայմանագրային անցման գումար: 2023 թվականի համեմատ փաստացի ծախսը ավել է 91,808.4 հազար դրամով: Ծրագրի շրջանակներում առողջապահական ապահովագրություն են ստացել Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցները, Երևան հիմնադրամի, ՔԿԱԳ աշխատակիցները, «ԳՇՊՇ» ՓԲԸ սպասարկող անձնակազմը, «Կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի, «Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի, «Երևանի ավտոբուս», «Երևանի էլեկտրատրանսպորտ», «Երթաղլույս» ՓԲԸ-ների, «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրման հիմնարկ»-ի, «Կենդանիների խնամքի կենտրոն», «Բնակչության հատուկ սպասարկում»,

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ների հաստիքացուցակով նախատեսված հաստիք զբաղեցնող աշխատողները, ինչպես նաև Երևանի ենթակայության մանկապարտեզների, շախմատի դպրոցների, երաժշտական, արվեստի դպրոցների, մարզադպրոցների, մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական դաստիարակության, մշակույթի կենտրոնների, այլ մշակութային կազմակերպությունների, գրադարանների, թատրոնների և թանգարանների թվով 14001 աշխատակիցները: 2023 թվականին առողջապահական ապահովագրություն են ստացել թվով 13190 աշխատակիցներ:

ՏԵՂԵԿԱՆՔ

Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից հատկացումների վերաբերյալ

Հատկացումների նպատակը	Գումարը (հազ. դրամ)
ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքին՝ մայիս ամսվա տեղատարափ անձրևներին հաջորդած հեղեղումների հետևանքները մեղմելու նպատակով աջակցություն	50,000.0
ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքային բնակավայրի տարածքում խաղահրապարակ կառուցելու համար աջակցություն	28,000.0

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» 1-ին ծրագրի վարկային միջոցներից փաստացի մասհանումները 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 5,300.0 հազար եվրո: Վարկային միջոցների մայր գումարի մարումները նախատեսվում են իրականացնել 2025 թվականից սկսած, իսկ 2024 թվականին պարտքի սպասարկմանն (վարկային պայմանագրով նախատեսված տոկոսագումար) ուղղվել է 40,845.4 հազար դրամ՝ 2023 թվականի 32,420.3 հազար դրամի համեմատությամբ:

2024 թվականին, 2023 թվականի 4,174,547.4 հազար դրամի համեմատ, կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի ձեռքբերմանն ուղղվել է 7,310,565.0 հազար դրամ, որից՝

«Երևանի ավտորուս» ՓԲԸ՝ 7,000,000.0 հազար դրամ,

«Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ՝ 10,565.0 հազար դրամ,

«Երևան բժշկական կենտրոն» ՓԲԸ՝ 300,000.0 հազար դրամ:

Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեն կատարվել է 3,015,916.5 հազար դրամ հավելուրդով՝ նախատեսված 7,092,001.1 հազար դրամ պակասուրդի և 2023 թվականի 3,664,564.1 հազար դրամ հավելուրդի դիմաց:

«Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» որոշման նախագիծը՝ ժամանակացույցի համաձայն, 2025 թվականի փետրվարի 3-ին ներկայացվել է Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի անդամներին, փետրվարի 10-ին հրավիրված նիստում տվել է իր դրական եզրակացությունը՝ 2025 թվականի փետրվարի 11-ից մինչև փետրվարի 26-ը Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի կատարման հաշվետվության նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ իրականացնելու համար: Հանրային քննարկման հրապարակայնությունը, մատչելիությունը և թափանցիկությունը ապահովելու նպատակով հանրային քննարկման մասնակցության հրավերը հրապարակվել է մամուլում և Երևան քաղաքի պաշտոնական կայքում: Միաժամանակ, ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական <http://www.e-draft.am> կայքում, ինչպես նաև Երևան քաղաքի պաշտոնական կայքում հրապարակվել է Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի կատարման հաշվետվության նախագծի էլեկտրոնային տարբերակը կից տեղեկանք-հիմնավորմամբ: 2025 թվականի փետրվարի 24-ին Երևանի քաղաքապետարանում կազմակերպվել է Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի կատարման հաշվետվության նախագծի հանրային քննարկում՝ հանրային բաց լսումների եղանակով, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան ամփոփաթեթ: Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի 2025 թվականի փետրվարի 27-ին կայացած նիստում ամփոփվել են հանրային քննարկման արդյունքները: Նույն նիստում Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհուրդը տվել է իր դրական եզրակացությունը՝ «Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» որոշման նախագիծը Երևանի ավագանուն ներկայացնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ. ԱՎԻՆՅԱՆ